

## ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԾԱՆԵՐԸ ՀԱՅ-ՄԱՍԼՈՒԳԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

«Թո՛ղ Ալլահը պահպանի նրան իր հաւատարմութեան համար, որ արտայայտում է, ծառայելու նրա պարտականութեան համար, որ կատարում է, ապահովութեան այն պարտքի համար, որ տալիս է որպէս հարկ՝ [զանազան] քանկագին ընծաների (քնագրում՝ *ʿarāʾif*) հետ միասին»<sup>1</sup>:

**ԺԳ. դարի կէսերին Կիլիկեան Հայաստանի պատմութեան մէջ սկսւում է արտաքին քաղաքական վտանգներով առկցուն մի նոր շրջափուլ: 1250 թուականին Եգիպտոսում տեղի ունեցած յեղափոխական վայրիվերումների արդիւնքում իրենց տէրերի իշխանութիւնը բռնազրաւում են երբեմնի ստրուկները՝ մեծաւ մասամբ թիւրք ծագման մամլուֆները: Այուրեան պետութեան փլատակների վրայ յառնում է մի պետութիւն, որ արդէ պատմագրութեան մէջ Մամլուքեան սուլթանութիւն է անուանուում: Այն մէկ տասնամեակի ընթացքում դառնում է տարածաշրջանային առաջատար ուժ՝ ծաւալուելով նաեւ Ասորիքի տարածքում եւ իր գերիշխանութեան տակ առնելով կործանուած Այուրեան պետութեան մնացուկ քաղաքական միաւորները:**

1 Ալ-Ումարին (մահ. 1349 թ.) իր *al-Taʾrīf* երկում պահպանել է հայոց արքաներին ուղղուած նամակներում օգտագործուած այսպէս սասծ «*վարքաճեւային աղօթքների եւ [բարե]մաղթանքների» (duʿāʾ)* քանածուերի օրինակներ (թուով 7): Սա այդ քանածուերից մէկն է եւ, մեր կարծիքով, քաղուած է Լեւոն Գ.ին (կառ. 1320-1342 թթ.) հասցեագրուած նամակներից մէկից: Տե՛ս *al-ʿUmārī, Al-Taʾrīf bi-l-muṣṭalah al-šarīf*, bi-tahqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-ʿilmiyya, Bayrūt, 1988, ք. 83: Մէջբերման մէջ «հարկ» քարգամուածը քնագրի *al-qafīʿa* է, որի տեղում ալ-Կալկաշնդիի մօտ *al-wazīfa* է, որ նշանակում է «պաշտօն»: Տե՛ս *al-Qalqašandī, Šubḥ al-aʾšā fi šināʾat al-inšāʾ*, ք. 8, *al-Maṭbaʿa al-amīriyya, al-Qāhira*, 1919, ք. 31:

Մամլուքեան սուլթանութեան աստիճանական հզօրացումը շատ շուտով լրջագոյն կասկածի տակ է դնում Ասորիքի եւ Պահեստինի խաչակրաց պետութիւնների յետագայ գոյութիւնը, որոնց կլլելու համար ընդամէնը երեք-չորս տասնամեակ է պահանջուում: Նոյնպիսի սպառնալիքի տակ է յայտնուում նաեւ Կիլիկեան Հայաստանի թագաւորութիւնը: ԺԳ. դարի կէսին մերձարեւելեան տարածաշրջանի քաղաքական քարտէսը եւս մի անգամ է վերածեւաւորուում՝ արդէն հիւսիս-արեւելքից: Իրանի տարածքում ասպարէզ է իջնում եւս մի հզօրագոյն ուժ՝ Մոնղոլական Իլխանութիւնը, որ դառնում է Մամլուքեան սուլթանութեան արժանի հակառակորդն ու գլխաւորագոյն հակակռող ուժը: Կիլիկիոյ հայոց թագաւորութեանը յաջողում է դիւանազիտական միջոցներով խուսափել կործանարար ներխուժումից եւ, իր քաղաքական ստորակայութիւնն ու մոնղոլների գերապետութիւնն ընդունելով, տեղ գտնել մոնղոլական ճամբարում: Քաղաքական սոյն ընթացքով պայմանաւորուած՝ Կիլիկեան Հայաստանը այդուհետ յայտնուում է երկու տէրութիւնների բախման առաջնագդդում՝ ժամանակ առ ժամանակ «քաւութեան նոխազ» դառնալով Սուլթանութեան հակամոնղոլական գործողութիւնների համար եւ իր վրայ կրելով նրա ծանրագոյն հարուածները: Մամլուք-մոնղոլական հակամարտութիւնը, հրադադարի եւ «սառը պատերազմի» փուլերով ընդմիջուելով, ձգուում է շուրջ 80 տարի: Եւ թէեւ 1323ին հակառակորդների երկարամեայ հակամարտութիւնը եզրափակուում է հաշտութեամբ<sup>2</sup>, Մամլուքեան սուլթանութիւնը շարունակում է մնալ Կիլիկեան Հայաստանի գոյութեան հիմնական սպառնալիքը: Հզօր դաշնակցի բացակայութեան պարագայում՝ մուսուլմանական քաղաքական ուժերի շրջափակման մէջ միայնակ մնացած քրիստոնեայ պետութեան ճակատագիրը կանխորոշուած էր: Մամլուքեան աւերիչ եւ աւարառական արշաւանքների արդիւնքում շարունակ բզկտուելով՝ Կիլիկեան Հայաստանը, այնուամենայնիւ, կարողացաւ դեռ կէս դար պահպանել իր գոյութիւնը:

Հայ-մամլուքեան շուրջ 115ամեայ հակամարտութիւնն ուղեկցուել է ոչ միայն արշաւանքներով եւ ռազմական գործողութիւններով, այլեւ դիւանազիտական ակտիւ հաղորդակցութեամբ,

2 AMITAI, R., "The Resolution of the Mongol-Mamluk War", in *Mongols, Turks and Others: Eurasian Nomads and the Sedentary World*, ed. by R. Amitai and M. Biran, Brill, Leiden-Boston 2005, 359-390.

երկուստեք դեսպանազնացուծիւններով, քաղաքական միջնորդութեան, խաղաղութեան, զինադադարի, գերիների փոխանակութեան, տարանցիկ առեւտրի շուրջ բանակցութիւններով եւ նամակագրութեամբ: Պատահական չէ, որ ԺԳ--ԺԵ դարերի արաբալեզու պատմական սկզբնաղբիւրներում այդքան շատ են մամլուքեան իշխանութիւններին ուղղուած հայկական դիւանագիտական առաքելութիւնների մասին յիշատակութիւնները՝ մի դէպքում հաշտութիւն խնդրելու, միւս դէպքում սահմանուած հարկը վճարելու, մէկ այլ դէպքում սուլթանին հայոց արքայի նամակը յանձնելու, այլ դէպքում մոնղոլ իլխանի եւ մամլուք սուլթանի միջեւ միջնորդութեան պատրաստակամութեան, մէկ ուրիշ դէպքում վերջինիս տարածքային պահանջների կամ ռազմագերութեան մէջ գտնուող հայ ազնուականների ազատութեան շուրջ բանակցելու եւ այլ նպատակներով: Մամլուքեան սուլթանների եւ հայոց արքաների դիւանագիտական նամակագրութեան արարողակարգին արքունի քարտուղարութեան արաբալեզու ձեռնարկներում եւ պատմական գրականութեան մէջ պահպանուած նիւթի հիման վրայ արդէն անդրադարձել ենք առանձին հետազոտութեամբ<sup>3</sup>: Ընդ սմին, այս ուսումնասիրութեան կիզակէտում կը լինեն արդէն երկու պետութիւնների ինքնակալների յարաբերութիւններում դիւանագիտական ընծաների փոխանակման, բանակցային գործընթացում եւ զանազան քաղաքական հարցերի լուծման նպատակով ընծաների օգտագործման, դրանց դերի եւ նշանակութեան մասին միջնադարեան սկզբնաղբիւրներում պահպանուած տեղեկութիւնները՝ օժտուած համապատասխան պատմական մեկնաբանութեամբ<sup>4</sup>:

Յատկանշական է, որ ինչպէս դիւանագիտական նամակագրութեան դէպքում, հայոց արքաներից մամլուքեան իշխանութիւններին յղուող ընծաների մասին հայկական աղբիւրների պա-

3 ԴԱՆԻԷԼ ԵԱՆ Գ., Հայ-մամլուքեան դիւանագիտական մամլակագրութիւնը ըստ այ-Սումարիի, Իրն Նագիր այ-Ջալչի եւ այ-Կայկաշանդիի ձեռնարկների, «Քաղաքակէտ», Վենետիկ 2016, № 2, 44-98:

4 Դիւանագիտական ընծաների վերաբերեալ արաբալեզու մատենագրութեան մէջ պահպանուած վկայութիւններն ուսումնասիրելիս՝ կսահմանափակուեմք դրանց փոխանակման քաղաքական համագումարների եւ իրարուրութեան համառոտ ներկայացմամբ եւ գերծ կմնանք հայ-մամլուքեան քաղաքական յարաբերութիւնների եւ ռազմական առեւտրական միջադէպերի վերաբերեալ մեզ յայտնի բոլոր սկզբնաղբիւրային փաստերի մանրամասն քննութիւնը:

րունակած վկայութիւնները նոյնպէս խիստ սահմանափակ են, եւ ինչպէս դիւանագիտական նամակագրութեան դէպքում, այս դէպքում նոյնպէս երկու երկրների տիրակալների միջեւ ընծաների փոխանակութեան վերաբերեալ տեղեկութիւնների հիմնական աղբիւրը մամուլքեան մատենագրութեան յուշարձաններն են: Դիւանագիտական նուէրների վերաբերեալ յիշատակութիւնները երբեմն հետաքրքիր փաստեր են պարունակում հայկական միջնադարեան նիւթական մշակոյթի ինքնատիպութեան մասին: Ստորեւ կառանձնացնենք հայ-մամուլքեան յարաբերութիւնների որոշ առանցքային դրուագներում ընծաների մատուցման կամ նուէրների փոխանակութեան առնչութեամբ հայ եւ արաբալեզու մատենագրութեան մէջ պահպանուած ամենայիշարժան վկայութիւնները:

Բայց նախ պարզաբանենք, թէ ինչ նկատի ունենք՝ «դիւանագիտական ընծայ» ասելով: Ինչպէս մարդկային առօրեայ յարաբերութիւններում, այնպէս էլ դիւանագիտութեան մէջ նուէրը կամ ընծան այն մատուցողի վերաբերմունքի, ուշադրութեան, մտերմութեան նիւթեղէն, առարկայական արտայայտութիւնն է, խորհրդանիշը՝ միտուած ստացողի մօտ առաջացնելու այն յոյզերն ու զգացողութիւնները, որոնք կանխամտածուել են այն սուուողի կողմից: Եւ ինչպէս առտնին հաղորդակցման մէջ, բայց առաւել դիւանագիտութեան մէջ, նուէրները, յուզարտայայտչական բովանդակութիւն ունենալուց՝ այն է՝ յարգանքի, մտերմութեան, անկեղծ համակրանքի առհասարակ լինելուց զատ, կարող են ունենալ նաեւ ծածուկ նպատակներ, շահադիտական մտայնութիւններ կամ ենթատեքստ: Դիւանագիտական նուիրաբերումը պետական-քաղաքական միաւորների կամ ժողովուրդների, նրանց հոգեւոր-քաղաքական առաջնորդների, այլ բարձրաստիճան իշխանաւորների յարաբերութիւնների անբաժանելի մաս է եղել դեռեւս հնագոյն ժամանակներից՝ որպէս երկու կողմերի բարեկամական, դաշնակցային, ուժի եւ հզօրութեան առումով միահաստատ կամ ստորակայական յարաբերութիւնների խորհրդանիշ: «Արքաների միջեւ եղարարութիւն, դաշինք, խաղաղութիւն եւ լաւ [յարաբերութիւններ] կը լինեն, եթէ [նա] (իսկ՝ իմք) հարուստ լինի [թանկագին] քարերով, հարուստ լինի արծաթով եւ հարուստ լինի [ոսկով]».- ասում է «Թէլ ալ-Ամարնայի արխիւի» հին եգիպտական մի վաւերագրում<sup>5</sup>

5 St'ua ARUZ, J., *The Art of Exchange in Beyond Babylon: Art, trade, and Diplomacy in the Second Millennium B.C.*, ed. by J. Aruz, K. Benzel, J. M. Evans, The Metropolitan Museum of Arts, New York 2008, 392-393, եւ յատկապէս՝ *The El-*

յղուած Բաբելոնի արքայ Բուրնայ-Բուրիաչ Բ-ից (կառ. մօտ ն.թ. 1359–1333) եգիպտոսի էինաթոն փարաւոնին (կառ. ն.թ. 1353–1336 միջակայքում): Այն բացայայտում է երկու կառավարողների յարաբերութիւններում նուէրների փոխանակութեան մասին ընկալումների առանձնայատկութիւնը անտիկ հասարակութեան մէջ:

Համապատասխան ընծաների ընտրութիւնից բացի միջպետական դիւանագիտութեան մէջ ոչ պակաս կարեւոր դեր ու նշանակութիւն է տրուել բանաւոր կամ գրաւոր ուղերձն ու ընծան հասցէատիրոջը հասցնող բանազնացների՝ դեսպանների, նուիրակների եւ սուրհանդակների ընտրութեանը, քանզի վերջիններս ըստ էութեան կատարում էին ոչ միայն քաղաքական-դիւանագիտական, այլեւ քաղաքակրթական եւ մշակութային երկխօսութեան գործառոյթ: Ընդ որում, որքան ազդեցիկ էր բանազնացի անձից եւ նրա մատուցած ընծայից հասցէատիրոջ ստացած տպաւորութիւնը, եւ որքան թիրախային էր նրա բովանդակած ուղերձը, այնքան աւելի իրատեսական էին «նուիրաբերի» հետապնդած քաղաքական նպատակի կենսագործման հնարաւորութիւնները: Ձուր չէ, որ միջնադարում դիւանագիտական ընծան շատ յաճախ ասոցացուել է կաշառքի, դահամունքի հետ: Օրինակ, մամլուքեան պատմիչ Բադր ալ-Դիւն ալ-Այնին գրում է, որ հայոց արքայ Հեթումը Բեհսենի բերդին «նուէրներով» է տիրել: «Այն [նախկինում] Հալեպի տարածքների մաս էր,– գրում է նա,– պատկանում էր մուսուլմաններին, եւ նրա վրայ իշխողը Հալեպի տէր ալ-Մալիք ալ-Նասիրն էր: Այդպէս էր, քանի դեռ Հուլաւուն չէր մտել Հալեպ եւ գրաւել քոյր երկրները: Երբ թափուրը՝ Սսի տէրը, իմացաւ, որ Հուլաւուն այն [նոյնպէս] գրաւել է, նրա մօտ գնաց եւ նուէրներով շողոփորթեց, գումար տարաւ նրան՝ ինդրելով, որ Բահասնան (Bahasnā) իրենը լինի, եւ նա էլ յանձնեց նրան»<sup>6</sup>:

Այժմ մի քիչ խօսենք դիւանագիտական նուիրաբերման մամլուքեան արարողակարգի մասին առհասարակ: Մամլուքեան սկզբնաղբիւրներում դիւանագիտական ընծաները նկարագրելու

---

*Amarna Correspondence: A New Edition of the Cuneiform Letters from the Site of El-Amarna based on Collations of All Extant Tablets*, vol. 1, collated, transcribed and trans. by Anson F. Rainey Z<sup>1</sup>L, ed. by William M. Schniedewind, Brill, Leiden-Boston 2015, 100-105:

6 AL-‘AYNĪ, *‘Iqd al-ğumān fi tāriḥ ahl al-zamān* (*‘Asr salāfiḥ al-Mamālik*), bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, ց. 3, al-Ḥay’a al-miṣriyya al-‘āma li-l-kitāb, al-Qāhira 1987-1992, 151-152.

համար մի քանի եզրոյթներ են օգտագործուել՝ *hadiyya* (յզն. *hadāya*), *taqdimā* (յզն. *taqādim*) եւ *tuhfa* (յզն. *tuhaf*): Ընդ որում, *taqdimā*ն սովորական ընծան չէր, այլ մամլուքեան տիրակալից ստորակայական կախման մէջ գտնուող միապետի կողմից մատուցումն էր՝ նուիրաբերումը՝ որպէս հարկային պարտաւորութեան բաղադրիչ: Հետեւապէս, ընծաների այս տեսակը սուլթանի կողմից փոխադարձ նուէր չէր ենթադրում<sup>7</sup>: *Tuhfa*ն նոյնպէս սովորական նուէրը չէր, այլ իւրայատուկ կամ արտասովոր իր, աւարկայ՝ շատ յաճախ գեղարուեստական արժէք ունեցող զարմա-

7 Մամլուքեան սուլթանութեան եւ այլ պետական-ֆաղափական միաւորների հետ դիւանագիական ընծաների փոխանակման թեման պատմաբանների ուշադրութեան կենտրոնում է յայտնուել վերջին երկու տասնամեակում, չնայած որ Մամլուքների պատմութեանը վերաբերող ուսումնասիրութիւններում դիւանագիտական նուիրաբերութեան առնձին հարցեր վաղուց են քննարկուել: Թեմայի շրջանակներում կատարած հետազոտութիւններից էր Մ. Մ. Ալ-Վակկադի յօդուածը *Բահրիների դինաստիայի կառավարման շրջանում դիւանագիտական նուիրաբերման մամլուքեան արարողակարգի վերաբերեալ*: Տե՛ս MAḤĀSIN MUḤAMMAD AL-WAQQĀD, *Al-Hadāya wa-l-tuhaf zamāna salāḥin al-mamālik 648-784 h./ 1250-1382 m.*, Hawliyyāt kulliyat al-adāb (Ġāmi‘at ‘Ayn Šāms), ց. 28, al-Qāhira, 2000, ք. 185-240: Մամլուքեան սուլթանների եւ Իրանի մոնղոլ իլխանների միջեւ դիւանագիտական ընծաների փոխանակութեանը յօդուած ունի նուիրուած Դ. Լիթթըլը: Տե՛ս LITTLE, D. P., *Diplomatic Missions and Gifts Exchanged by Mamluks and Ilkhans*, in *Beyond the legacy of Genghis Khan*, ed. by Linda Komaroff, Brill, Leiden-Boston 2006, 30-42: 2014ին Դ. Բեհրենս-Աբուսեյֆի հեղինակութեամբ լոյս տեսաւ քնագաւառի հետազոտութիւնների արդիւնքները ամփոփող մի կարեւոր աշխատութիւն: Աշխատութիւնը դիւանագիտական ընծաների մամլուքեան արարողակարգի առաջին համապարփակ ուսումնասիրութիւնն է: Նրանում մասնաւոր ուշադրութեան են արժանացել մամլուքեան սուլթանների եւ կարմիր ծովի, Հնդկական ովկիանոսի տարածաշրջանի (Եմէն, Հնդկաստան), Աֆրիկայի (Եթովպիա, Նուբիա, Մադրիբ, Մալի, Բոռնո), Իրանի, Փոքր Ասիայի, Սեւծովեան տարածաշրջանի, Կենտրոնական Ասիայի (Ոսկէ Հորդա, Իլխանութիւն, Ջալարեաններ, Թիմուրեաններ, Անատոլիայի թուրքմէնական իշխանութիւններ, Սեֆեաններ, Օսմաններ), Եւրոպայի (Կաստիլիա, Արագոն, Կիպրոս, Վենետիկ, Ֆլորենցիա, Ֆրանսիա) միապետների միջեւ ընծաների փոխանակութեան մասին միջնադարեան արարելու արքիւրներում պահպանուած նիւթը՝ ներկայացնելով դրանց պատմական եւ աշխարհաֆաղափական համախառնութիւնը: Տե՛ս BEHRENS-ABUSEIF, D., *Practising Diplomacy in the Mamluk Sultanate: Gifts and Material Culture in the Medieval Islamic World*, I. B. Tauris, London-New York 2014:

նայի՞ք, որը կարող էր իր արժանի տեղը գտնել պետական գանձարանի համապատասխան հաւաքածուում: Վերեւում որպէս բընաբան ներկայացուած քաղուածքում, ինչպէս տեսանք այլ-Ումա-րին գործածում է *ʔarīfa* (յգն. *ʔarāʔif*) բառը, որը յար եւ նման նշանակութիւն ունի՝ «արտասովոր իր», «հազուագիւտ առարկայ»: Սուլթանի պատասխան նուէրը նրան ենթակայ կամ դիրքով աւելի ցածր համարուող տիրակալին *inʔām* էր կոչում՝ «պարգեւ», «պարգեւատրում», «շնորհ» նշանակութեամբ:

Մամլուքեան իշխանութիւնները, Արեւելքում տարածուած սովորութեան համաձայն, շատ մեծ դեր եւ նշանակութիւն են տուել դեսպանազնացութեանը եւ դիւանագիտական առաքելութիւնների ընդունելութեան արարողակարգին: Օտարերկրեայ պաշտօնական պատուիրակութիւնների անդամներին՝ դեսպաններին եւ սուրհանդակներին, պատուով եւ հիւրընկալութեան բոլոր սկզբունքների պահպանմամբ ընդունումը մամլուքեան միապետի առատաձեռնութեան, բարեպաշտութեան եւ իմաստնութեան ցուցիչ էր: Դիւանագիտական կարեւոր այցելութիւնների ժամանակ մայրաքաղաք Կահիրէն անգամ զարդարում էր, օտարերկրայ դիւանագէտների համար շքերթներ եւ այլ միջոցառումներ էին կազմակերպում օրինակ, այցելութիւն բուրգեր<sup>8</sup>: Օտարազգի պաշտօնական հիւրերի, օտարերկրեայ դեսպանութիւնների ընդունելութեան համար պատասխանատու էմիրը կոչւում էր *mihmāndār*<sup>9</sup>: Արքունիքի բարձրաստիճան հիւրերի եւ դեսպանութիւնների հիւրընկալութեան արարողակարգով արդէն զբաղւում էր *hāǧib al-huǧǧāb* կոչուող պաշտօնեան՝ «գլխաւոր սենեկապետը», որը գրեթէ համապատասխանում էր կիլիկեան «ջամբուլայ»-ին:

Արարողակարգային առումով շարքային համարուող դեսպաններն ընդունւում էին Կահիրէի միջնաբերդի՝ *Qalʔat al-ǧabal*ի ստորոտում գտնուող *Dār al-diyāfa* կոչուող հիւրընկալութեան տանը: Իսկ ամենաբարձրաստիճան հիւրերն ընդունւում էին սուլթանական դրեակներին յարող արչաւարանում, եւ նրանց ողջունելու էր գնում եւ ընդունելութեան էր հրաւիրում «գլխաւոր սենեկապետը»: «Հիւրընկալութեան տան» (*Dār al-diyāfa*) գործունէու-

8 Անդ, 13-14:

9 AL-QALQAŞANDĪ, *Şubh*, ǧ. 4, 187; ŞAMS AL-DĪN MUĤAMMAD AL-SAH-MĀWĪ, *Al-Ṭaǧr al-bāsim fi sināʔat al-kātib wa-l-kātim, al-maʔriʔ bi-l-ijsm (al-Maqsid al-rafiʔ al-munṣā al-hādī li-diwān al-inṣāʔ li-l-hālidī)*, bi-taḥqīq Aşraf Muḥammad Anas, ǧ. 1, *Dār al-kutub wa-l-waṭāʔiq, al-Qāhira* 2009, 339.

թեան՝ դեսպաններին ձիերով, պարէնով եւ օրապահիկով ապահովելու հետ կապուած աշխատանքները գտնուում էին յատուկ պաշտօնեայի հոգածութեան ներքոյ, որը կոչուում էր «հիրաւատան եւ շուկաների վերատեսուչ» (nāzir dār al-diyāfa wa-l-aswāq)<sup>10</sup>:

Ալ-Կալկաշանդին իր Şubḥal-a'sā երկում այս եւ այլ խիստ արժէքաւոր տեղեկութիւններն է հաղորդում օտարերկրեայ դեսպանների ընդունելութեան մամլութեան արարողակարգի մասին: «Սովորութիւն է, որ երբ որեւէ արժայի դեսպան է գալիս Սուլթանութեան սահմանային շրջաններ, այդ կողմերի փոխարքան գրում է սուլթանին՝ տեղեկացնելով դեսպանութեան մասին: Վերջինս թոյլատրում է, որ իրեն անձամբ ներկայանայ, պարզաբանում է հանդիպման սուլթանական հանդիսակարգը եւ նա ներկայանում է: Եթէ ընդունելութիւնն ի վերջոյ կայանում է, եւ եթէ ուղարկողը մեծ դիրք ունեցող արքայ էր՝ դիցուք, «Արեւելի խաներից» մէկը, նրան դիմաւորելու էին դուրս գալիս մեծագոյն էմիրներից ումանք, ինչպէս օրինակ՝ փոխարքան, սենեկապետը եւ այլն: Նրան իջեւան են տալիս սուլթանական այն ապարաններում՝ մերձ այն հրապարակին, որտեղ նա զնդակ է խաղում: Այն բարձր էր դեսպանների կեցավայրերից: Իսկ եթէ [ուղարկողն] այդպիսին չէր, նրան դիմաւորում էր miḥmāndār-ը եւ dawādār-ի թոյլտուութեամբ նրան տեղաւորում էր «հիրաւատանութեան տանը» կամ որեւէ այլ վայրում՝ համաձայն նրա [պաշտօնեական] դիրքի: Յետոյ սպասում է հանդիպման օրուան, երբ սուլթանը նստում է «ընդունելութեան դահլիճում» (īwān), ներկայ են գտնուում պետական երեսելիները՝ սրի եւ գրի այրեր (իմա՝ ռազմական զործիչներ եւ զրազիր-քարտուղարներ-Գ.Դ.), որոնք պետք է ներկայ լինեն ի պաշտօնէ: Ներկայանում է այդ դեսպանը՝ իր հետ ունենալով րեքած գրութիւնը: Նա համբուրում է հողը, եւ dawādār-ն<sup>11</sup> ընդունում է նամակը նրանից եւ հպում այն դեսպանի դէմքին: Այս փոխանցում է այն սուլթանին, ով քացում է այն եւ փոխանցում գլխաւոր քարտուղարին, որպէսզի նա ընթերցի այն սուլթանի համար, [որից յետոյ վերջինս] արձակում է դրա վերաբերեալ իր հրամանը»<sup>12</sup>:

10 AL-QALQAŞANDĪ, *Şubḥ*, ց. 4, 32; AL-SAHMAWĪ, *Al-Tağr al-bāsim*, ց. 1, 416.

11 Բառացի՝ «սուլթանական թանաքամանը բռնող»: Այս պաշտօնեան իր հիմնական գործառնայից գատ սուլթանին էր փոխանցում ստացուած նամակները, նրան տեղեկացնում էր արքունական պալատ ներկայացած հիւրերի եւ այցելուների մասին:

12 AL-QALQAŞANDĪ, *Şubḥ*, ց. 4, 32: Տե՛ս նաեւ ‘ABD AL-MUN’IM MĀĜĪD, *Naẓm dawlat salāfin al-mamālik wa-rusūmuhum fī Mişr (dirāsa šāmila li-l-naẓm al-siyā-*

Այս մեկնաբանութիւնից եզրակացնելի է, որ Կրիլիկոյ Հայոց արքաների դեսպաններն ակներեւաբար դասուել են երկրորդ կարգին, եւ նրանց ընդունելութիւնն սուլթանական արքունիքում կազմակերպուել է *mihmāndārների կողմից*:

Այլուր նոյն հեղինակը գրում է, որ ընդունելութիւնների համար նախատեսուած հանդիսասրահում մարմարիոնէ ամբիոնի տեսքով բարձրադիր գահ կար, որ նման էր մզկիթներում դրուուող ամբիոններին՝ պատին յենուած: Սուլթանը այնտեղ նըստում էր կարեւոր օրերին՝ օրինակ դեսպանների ժամանման ժամանակ<sup>13</sup>:

Դեսպանընկալութեան մամլուքեան արարողակարգի որոշ կանոնների մասին էլ կարելի է պատկերացում կազմել եւս մի հեղինակի՝ ալ-Հասան իբն Աբդ Ալլահ ալ-Սաֆադիի (մահ. մօտ 1317) *Atār al-uwwal fi tartīb al-duwal երկից*<sup>14</sup>: Սա այսպէս կոչուած «արքայազնների հայելիներ» (*specula principum*) ժանրի աշխատութիւնն է՝ պետական արդիւնաւէտ կառավարման ուղեցոյց բարձրաստիճան իշխանաւորների համար: Ինքը՝ ալ-Սաֆադին, մամլուքեան դիւանատան գրագիր էր, ուստի նրանում շարադրուած շատ դրոյթներն անկասկած կարելի է մամլուքեան կարողակարգի իր կեանքի օրօք արդէն իսկ գործաւնուած նորմեր համարել: Օրինակ, «Արժաների դեսպանների, նրանց տեսակների, նուէրների

*siyya*), ց. 1, Maktabat al-Anğlū-al-Mişriyya, 1979, 154-155; AL-WAQĀD, *Al-Hadāya*, 194-196; BEHRENS-ABOUSEIF, D., *Practising Diplomacy*, 14-15:

13 AL-QALQAŞANDĪ, *Şubh*, ց. 4, 6-7.

14 Տե՛ս AL-ĤASAN [I]BN ABĪ MUĤMMAD ABD ALLĀH AL-ŞAFADĪ, *Atār al-uwwal fi tartīb al-duwal*, bitaḥqīq ‘Abd al-Raḥman ‘Umayra, Dār al-ğayl, Bayrūt 1989: Յատկանշական է, որ ալ-Սաֆադին նաեւ *Nuzhat al-mālik wa-l-mamlūk* վերնագրով ժամանակագրութեան հեղինակ է: *Atār al-uwwal*-ի հրատարակիչ Աբդ ալ-Ռահման Ումայրան այդ երկը ներկայացրել է որպէս հեղինակի միակ աշխատութիւն: Նրա բացթողումը լրացրել է *Nuzhat al-mālik երկրի հրատարակիչ Ումար Աբդ ալ-Սալամ Թադմուրի*ն՝ հրատարակութիւնն օժտելով հեղինակի կեանքի, գործունէութեան եւ մատենագրական ժառանգութեան մասին ներածական ակնարկով: Տե՛ս նոյնի՝ *Nuzhat al-mālik wa-l-mamlūk fi muḥtaşar sīrat man waliya Mişr min al-mulūk, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī*, al-Maktaba al-‘Asriyya, Şaydā-Bayrūt 2003, 7-16: Բեհրենս-Արոսեյֆն իր գրքում ալ-Սաֆադիին սխալմամբ անուանում է «Իբն ալ-Արբաս»՝ ձեռքի տակ ունենալով նրա աշխատութեան ժժ. դարավերջի հրատարակութիւնը: Տե՛ս BEHRENS-ABOUSEIF, D., *Practising Diplomacy*, 19-20:

եւ ընծաների մասին» գլխում հեղինակը գրում է, որ եթէ անհնար է լինում արքայի հանդիպումը դեսպանի հետ, նա իր ենթականերից մէկին է ուղարկում՝ նրան տեսակցելու եւ նրա խնդրով զբաղուելու՝ ըստ նրա եւ նրան ուղարկողի դիրքի եւ հեղինակութեան: Եթէ դեսպանը տիրակալի մօտ էր ուղարկուած սահմանային ամրութիւնների կամ ռազմական շրջանների կառավարիչների կողմից, նա, հարկ է, որ անյապաղ զբաղուէր նրանց խնդրով, քանզի շտապողականութիւնը կարող էր օգտակար լինել, իսկ դանդաղումը՝ վնասաբեր: Հակառակ դէպքում միապետը դեսպանին առնուազն երեք օրով պէտք է կեցավայր տար «հիւրընկալութեան տանը» եւ արգելէր որեւէ մէկին հանդիպել նրան: Սրանից յետոյ միայն դեսպանը պէտք է հրաւիրուի արքունիք եւ հանդիպի սուլթանին նրան ենթակայ մեծամեծ իշխանաւորների ներկայութեամբ<sup>15</sup>: Ըստ իսաիլ իբն Շահինի (մահ. 1468) օտարերկրացի պատուիրակի հետ հանդիպումը սովորաբար անցկացւում էր երկուշաբթի եւ հինգշաբթի օրերին եւ կոչուում էր mawkib al-ṭwān («ընդունելութեան սրահի քափոր»)՝<sup>16</sup>:

Ալ-Սաֆադիի երկից հասկանում ենք նաեւ, որ նամակին ուղեկցող նուէրները դեսպաններն իրենց հետ չէին տանում «ընդունելութեան դահլիճ»: Այս դէպքում սենեկապետը յայտնում էր սուլթանին, որ ոմն արքան նուէր է յղել իրեն, որոնք անհրաժեշտ է ընդունել: Դեսպանը նուէրները թողնում էր արքունեաց ապարանքների ամենամօտ դռան մօտ եւ ուղեկցւում դէպի «ընդունելութեան դահլիճ»: Եւ միայն այն ժամանակ, երբ սուլթանը թոյլ էր տալիս ընդունել նուէրները, ներս էին բերում եւ ցուցադրում բացի հարձերից, որոնց սուլթանի թոյլտուութեամբ տեղափոխում էին Dār al-harīm («սուլթանական հարեմ»)՝<sup>17</sup>: Ալ-Սաֆադիի գրում է, նաեւ, որ արքաները շատ յաճախ այնպիսի նուէրներ էին փոխանակում, որ ինչ-որ բան էին խորհրդանշում, որե-

15 AL-ŞAFADĪ, *Aṭār al-uwwal*, 193-194.

16 ĠARAS AL-DĪN ḤALĪL [I]BN ŠĀHĪN AL-ZĀHIRĪ, *Kitāb Zubdat kašf al-mamālik wa-bayān al-ṭuruq wa-l-masālik* (Zoubdat kachf el-mamālik: tableau politique et administratif de l'Égypte, de la Syrie et du Hidjāz sous la domination des Sultans mamloûks, du XIIIe au XVe siècles, texte arabe publié par Paul Ravaisse, Imprimerie Nationale, Paris 1894), 86: Սրանով էլ երևի կարելի է քացաքել դեսպանների «հիւրընկալութեան տանը» երեք օր պահելու մասին պ-Սաֆադիի մեկնաբանութիւնը:

17 AL-ŞAFADĪ, *Aṭār al-uwwal*, 195.

ւէ թաքնուած միտք (al-ğāz) ունէին: Զորօրինակ, որպէս նուէր ուղարկուած գէնքը կարող էր ընկալուել որպէս սպառնալիք<sup>18</sup>: Կարծես թէ միջազգային արարողակարգային գործընթացում ընդունուած էր, որ նամակները կից ցանկ ունենային՝ առդիր նուէրների թուարկումով: Արաբալեզու աղբիւրներից յայտնի է, որ ստացուած նուէրների համար մամլուքեան արքունիքում առանձին հաշուառում էր իրականացուում: Վարուում էին նուէրների գըրանցման համար նախատեսուած յատուկ մատեաններ, որտեղ նըշումներ էին կատարուում «նուիրատուի», նրա ուղարկած «նուէրների», դրանց գնահատուած արժէքի վերաբերեալ: Մատեաններում նուէրների վերաբերեալ կատարուած նշումները անհրաժեշտութեան դէպքում կարող էին համեմատուել, իսկ ցածրարժէք նուէրները կարող էին անգամ քաղաքական լուրջ առկածների պատճառ դառնալ<sup>19</sup>:

Արարողակարգային որոշ կարգերի մասին էլ տեղեկանում ենք Շամս ալ-Դին Մուհամմադ ալ-Մահմաւիի (մահ. 1464) Al-Maqsid al-rafi' քարտուղարութեան ձեռնարկից: Մասնաւորապէս տեղեկանում ենք, որ մամլուքեան արքունիքում նաեւ թարգմանիչներ են եղել: «...Տարբեր լեզուների թարգմանիչներ կան: Մեր օրերում պետական ծառայութեան մէջ են երեք հոգի՝ «Փրանկեան լեզուն» արաբերէմ թարգմանելու նպատակով: Ալ-Նասիր Ֆարաջից<sup>20</sup> առաջ երկուսն էին, որոնցից մէկը [համաժամանակօրէն] արաբերէմ էր թարգմանում խօսքը, իսկ միւսը կրկնութեան ժամանակ նրան սըրբագրում էր»<sup>21</sup>: Ձեռքի տակ փաստ չունենալով դժուարանում ենք յստակեցնել, թէ սուլթանական արքունիք հայ դեսպանների կողմից փոխանցուող պաշտօնական նամակների բնօրինակներն ունենում էին արդեօք ուղեկցող «ռչ պաշտօնական» արաբերէն թարգմանութիւններ, թէ դրանք արաբերէն էին թարգմանուում մամլուքեան դիւանատանը: Ամէն դէպքում չենք կարծում, որ սուլթանի մօտ Կիլիկեան Հայաստանից ուղարկուող դեսպաններն արաբերէնի իմացութիւն են ունեցել կամ մշտապէս թարգմանիչ ուղեկից են ունեցել: Համոզուած ենք, որ ինչպէս «Փրանկեան լե-

18 Անդ:

19 AL-WAQQĀD, *Al-Hadāya*, 198; BEHRENS-ABOUSEIF, D., *Practising Diplomacy*, 19-20.

20 Նասիր ալ-Դին Ֆարաջ իբն Բարկուկ՝ Եգիպտոսի եւ Ասորիի սուլթան 1399-1405, 1405-1412 թուականներին:

21 AL-SAHMAWĪ, *Al-Tağr al-bāsim*, ց. 1, 339.

գուների» դէպքում, հայերէնի դէպքում նոյնպէս թարգմանութեան հետ կապուած հարցը լուծուել է դիւանատանը: Շատ հաւանական է, որ լեզուական այս խոչընդոտը կարող էր յաղթահարուել որեւէ երրորդ՝ ինչպէս ալ-Սահմալին է կոչուում, «ֆրակկեան» լեզուով (այս դէպքում արդէն որպէս lingua franca) հաղորդակցութեամբ: Ալ-Սահմալին գրում է նաեւ, որ թարգմանիչները համար պարտադիր պայման էր, որ մուսուլման լինէին: Նս ալնուհետ գրում է, որ երբ «ֆրակկեան համայնքից» դիւանատուն նամակ էր ստացուում, այն համապատասխան գրազրի կողմից արաբերէն էր թարգմանուում, եւ բովանդակութիւնը ներկայացուում էր դիւանապետին (kātim al-sirr), ով ընթերցում էր այն սուլթանի համար: «Անհաւատները» (ahl al-kufr) նամակների թարգմանութեամբ պէտք է զբաղուէին առնուազն երկու հոգի, մուսուլմանների համար՝ մէկն էլ բաւական էր: Թարգմանիչները գտնուում էր դիւանապետի վերահսկման եւ վերադիտման ներքոյ, եւ նա էր լիազօրուած հեռացնել նրանց աշխատանքից եւ մէկ ուրիշով փոխարինել<sup>22</sup>:

Կիլիկիայից ուղարկուած դեսպանազնացութիւնների նկարագրութիւններում մամլուքեան պատմիչները յաճախ են գրում հայոց արքաներին եւ դեսպաններին շնորհ տրուած «պատուոյ հանդերձները» (hilā') մասին: Մամլուքեան պաշտօնական դիւանագիտական արարողակարգի համաձայն hilā'ն նախատեսուած էր ստորակայ ինքնակային եւ նրա դեսպաններին պագեւատորելու համար: Օրինակ, իրենք՝ մամլուքեան սուլթանները, hilā' ստանալը համարում էին խիստ նուաստացուցիչ եւ անընդունելի իրենց համար<sup>23</sup>: Մամլուքեան պատմագրական երկերում Կիլիկեան Հայաստանից ժամանած դեսպանութիւնների մասին վկայութիւնների միւս առանձնայատկութիւնն այն է, որ մուսուլման հեղինակները ակնյայտ աչառութեամբ եւ զրեթէ առանց բացառութեան խուսափում են յիշատակել սուլթանի կողմից հայոց արքային տրուած պատասխան նուէրը՝ լաւագոյն դէպքում սահմանափակուելով «պատուոյ հանդերձները» յիշատակութեամբ:

Դիւանագիտական հիւրընկալութեան անքակտելի կարգերից էր նաեւ դեսպանների կեանքի եւ անվտանգութեան անձեռնմխելիութեան ապահովումը: Ալ-Սաֆադին այս առիթով

22 Անդ, 339-340:

23 BEHRENS-ABOUSEIF, D., *Practising Diplomacy*, 23-24.

գրում է, որ միապետն իր իշխանութեանը ենթակայ բոլոր պաշտօնատար անձանց պէտք է կարգադրի, որ դեսպաններին եւ սուրհանդակների հարցն իրենց հոգածու վերաբերմունքի տակ պահեն՝ նրանց արժանի կեցավայրեր տան, վճարել նրանց ապրուստի համար անհրաժեշտ ծախսերի եւ սնունդի համար, հարկ եղած դէպքում լուծել նրանց փոխադրամիջոցների՝ հեծկան անասունների եւ երբեմն նոյնիսկ պարեկային ուղեկցման հարցը<sup>24</sup>:

Այս դրոյթը խախտման էր ենթակայ միայն բացառիկ դէպքերում, երբ սուրհանդակ յղած միապետը ինքն էր մեղադրուում դիւանագիտական վարմունքի կանոնների զանցառման մէջ, կամ երբ ըստ դեսպանընկալ կողմի՝ առաքելութեան անդամներն պատշաճ վարքագիծ չէին դրսեւորում: Փաստորէն, բանակցային կողմերից մէկը լիազօրուած էր անտեսելու դիւանագիտական անձեռնմխելիութեան կարգը, երբ միւս կողմն արդէն համարուում էր կարգը, դաշինքը կամ պայմանաւորուածութիւն խախտած: Այդ դէպքերում սուլթանը կարող էր ոչ միայն պատժել դեսպաններին, այլեւ չընդունել նրանց բերած նուէրներն ու նամակը: Այսօրինակ անյաջող դիւանագիտական առաքելութիւններից մէկի մասին հետաքրքրական վկայութիւն ունի Շաֆի իբն Ալիին (մահ. 1330), ով արքունի դիւանատան գրագիրներից էր: Ըստ նրա՝ 1265ին սուլթան Բայբարս ալ-Բունդուկդարիին (կառ. 1260-1277) թանկագին նուէրներով եւ հաշտութեան առաջարկով ներկայացած հայ դեսպաններից երկուսի միջեւ վէճ է ծագել, եւ նրանցից մէկը դանակահարել է միւսին, իսկ Բայբարսն էլ հրամայել է կախաղան բարձրացնել առաջինին: Միւս դեսպանները, սակայն, ինդրել են ինայել նրան, բայց սուլթանը մերժել է: - Դիւանագիտական այս անախորժ միջադէպի հարթման համար նրանք հայցել են որոշ էմիրների միջնորդութիւնը՝ խոստանալով, որ նա իր արժանի պատիժը կը ստանայ իր երկրում, որից յետոյ միայն Բայբարսը համաձայնել է<sup>25</sup>:

Ինչպէս երեւում է, այս պատուիրակութիւնը սուլթան Բայբարսի հետ բանակցութեան սեղանի շուրջ նստելու Հեթումի միակ փորձը չի եղել: Ալ-Իւնիինի պատմիչից տեղեկանում ենք, որ 1265ի ամռանը (663ի Շաւուալ ամսին) Սսի տէրը (šāhib Sīs) դեսպանութիւններ է յղել՝ տեղեկացնելու սուլթանին «Հուլաղուի

24 AL-ŠAFADĪ, *Al-ġar al-uwwal*, 193.

25 ŠĀFI' IBN 'ALĪ, *Ḥusn al-manāqib al-sirriyya al-muntaz'a min al-sīra al-Zāhiriyya*, bi-tahqīq 'Abd al-'Azīz ibn 'Abd Allāh al-Ḥuwayṭir, al-Riyāḍ 1989, 208.

մահուան, ինչպես նաև այն մասին, որ նրա զորքերը համախմբուել են նրա որդու՝ Արաղայի շուրջ, եւ որ Բերքեն յարձակուել է նրա վրայ եւ պարտութեան մատնել»<sup>26</sup>: 1266ի Մայիս-Յունիս ամիսներին, երբ Բայբարան արդէն պաշարման օղակի մէջ էր առել Սաֆարը, կրկին նրան են ներկայանում «Սաի տիրոջ» ղեսպանները՝ նուէրներով, որոնք նա մերժում է եւ հրաժարում անգամ նրանց բերած նամակն ընդունել<sup>27</sup>: «Եւ քազում անգամ թագաւորն առաքեաց առ սուլտանն արս պատուաւորս գերագոյն պարգևօք զի արասցէ սէր, եւ սուլտանն ոչ առնոյր յանձն», - կարծես թէ հաստատում է Սմբատը մամլուքեան պատմիչների վկայութիւնները: Ակնյայտ էր, որ խաչակիրների ծովափնեայ տիրոյթները (Կեսարիա, Հայֆա, Արսուֆ, Սաֆար եւ այլն) զբաւելու ծրագրերում՝ Եգիպտոսի տիրակալն անխուսափելիօրէն ներառել էր նաեւ հայոց թագաւորութեանը հարուածելու օրահարցը<sup>28</sup>:

Սաի արչաւանքը տեղի է ունենում արդէն 1266ի Օգոստոսին: Իր երկրի սահմանները հատող մամլուքեան զօրքերը զիւանագիտական հնարներով կանգնեցնելու Հէթում Ա.ի բոլոր փորձերը դատապարտուած էին ձախողման: Շաֆի իբն Ալին գրում է, որ երբ մամլուք հրամանատարները «Սաի երկրի» կենտրոնական մասերն էին հասել (tawassatahā), նրանց եւ մի հայկական ղեսպանութիւն է ընդառաջ գնացել, որի անդամներին, սակայն, շղթայել են ու բանտ նետել՝ հրաժարուելով լսել Սաի արքայի հնազանդութեան խոստումները: «Ալ-Մալիք ալ-Մանսուրը, - գրում է նա, - սկսեց աւելի խորանալ եւ աւերել Սաի [երկրի] հողերը (al-bilād al-Sisiyya)՝ շրջան առ շրջան, բերդ առ բերդ, ամրոց առ ամրոց, կողպտեց հարստութիւնները (al-amwāl), գերութեան Բշեց երեխաներին (al-'iyāl), մինչեւ որ հասաւ Սիս»<sup>29</sup>: Նոյնքան անյաղող էին նաեւ մամլուքեան զօրքերին զինական դիմադրութիւն ցոյց տալու հնարաւորութիւնները: Երկիրը ենթարկւում է համատարած թալանի եւ կողոպտտի, աւերում եւ

26 AL-YŪNĪNĪ, *Dayl Mirāt al-zamān, al-tab'a al-ūlā*, ց. 2, Maṭba'at Dā'irat al-Ma'ārif al-'Uṣmāniyya, Ḥaydarābād 1955, 322.

27 Տե՛ս Անդ, 343, ինչպես նաև՝ IBN TAĠRĪ BIRDĪ, *Al-Nuġūm al-zāhira fī mulūk Miṣr wa-l-Qāhira*, ց. 7, bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-'ilmiyya, Bayrūt 1992, 125:

28 Հմմտ. ՄՄԲԱՍԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻ *Տարեգիրք*, աշխատասիրութեամբ Հ. Սերոյի Ազըլեանի, Վեներիկ 1956, 245:

29 ŠĀFI' IBN 'ALĪ, *Ḥusn*, 237.

հրոյ ճարակ են դառնում քաղաքներն ու բերդերը՝ այդ թվում քաղաքամայր Սիսը, հազարաւոր մարդիկ սպանւում են կամ քշւում գերութեան: Ընդ որում, Մառիի նշանաւոր ճակատամարտում սպանւում է Հայոց արքայի եղբայրը եւ որդիներից թորոսը, գերի է ընկնում միւս որդին՝ հայոց արքայազն Լեւոնը, գերեվարւում է նաեւ արքայի եղբօր՝ հայոց սպարապետ Սմբատ - Գունդստաբլի որդին՝ Վասիլ Թաթարը: Մամուլքեան զօրքերի նահանջից յետոյ, յիշեալ ողբերգութեան մէջ գոնէ որեւէ սփոփանք գտնելու նպատակով, պարզ է, որ Հեթումը ոչ մի միջոցի առաջ՝ թէ՛ դիւանագիտական եւ թէ՛ նիւթական, կանգ չէր առնելու որդուն եւ իր գահաժառանգին եզրկտական գերութիւնից ազատելու նպատակով: Շուրջ երկու տարի Հեթումի դեսպաններն անդադար Սիս-Կահիրէ ճանապարհին են լինում՝ Լեւոնին ազատ արձակելու կամ փրկագնելու հարցում սուլթան Բայբարսին համոզելու նպատակով: Բազմաթիւ այդ դեսպանութիւններից վկայաբերենք մէկը, որում նաեւ Հեթումի յղած նուէրների մասին յիշատակութիւն կայ: Այսպէս, 1267 Փետրուար-Մարտ ամիսներին, երբ ալ-Չահիր Բայբարսը Ասորիք էր եկել՝ Սաֆագի վերակառուցման աշխատանքներով զբաղուելու, նրան է ներկայանում մի հայկական դեսպանութիւն. «Ժամանցիցն Սսի դեսպանները՝ նուէրներով: նրանք տեսան փրանկ դեսպաններին, ինչպէս նաեւ կտրուած գլուխներ նիզակների վրայ»<sup>30</sup>: Պատմիչի հաղորդումից պարզ է, որ այս դաժան տեսարանը միտումնաւոր էր ստեղծուել՝ քրիստոնէայ դիւանագէտներին ահաբեկելու նպատակով: Երկար խուսանաւումներից յետոյ, Բայբարսն ի վերջոյ ձեւակերպում է իր պահանջները. բացի տարածքային զիջումներից, նա ցանկացաւ, որ Հեթումը մոնղոլական գերութիւնից ազատի եւ իրեն վերադարձնի իր մտերիմ մի մամուլքի՝ Սունկուր ալ-Աչկար անունով: Հայոց արքան համաձայնեց եւ որոշ ժամանակ անց գտաւ «սուլթանի պահանջած նուէրը»: Սուլթանը, սակայն, չչտապեց խաղաղութեան շուրջ վերջնական բանակցութիւններ սկսել, մինչեւ որ 1268ին չգրաւեց Անտիոքը: Անտիոքի նուաճումը եւս հոգեբանական ճնշում էր Հեթումի վրայ՝ նրանից որքան հնարաւոր է շատ զիջումներ կորզելու նպատակով: 1268ի Մայիսին կնքուեց Հայ-մամուլքեան առաջին պայմանագիրը, իսկ Լեւոնն ու միւս պատանդուած իշխանաւորներն ազատուեցին գերութիւ-

30 MUḤĪ AL-DĪN IBN 'ABD AL-ZĀHIR, *Al-Rawḍ al-zāhir fī sīrat al-Mālik al-Zāhir, bi-tahqīq 'Abd al-'Azīz al-Ḥuwaytīr*, al-Riyāḍ 1976, 281.

նրից: Ընդ որում թէ՛ գերութեան ժամանակ եւ թէ՛ ազատ արձակելիս մուսուլման տիրակալը Լեւոնին վերաբերում է ըստ արժանույն՝ պատուով եւ յարգանքով, ինչպէս յարիր է արքաներին: Մօտ երկու տարուայ պանդխտութիւնից յետոյ հայոց արքայազնը պատիւներով եւ նուէրներով ճանապարհուում է Կիլիկիա. «Եւ մինչ յայսմ մեծի տագնապի եւ ի դողման էաք, բացաւ առաւառ խաղաղութեան մարդասիրին Աստուծոյ, եւ մեծն Լեւոն՝ թագաժառանգն Հայոց՝ գերծեալ եղև խնամաւքն Աստուծոյ յերկաթի հալոցացն, ի ծառայութենէ եւ ի ձեռաց նոյն արքային Եգիպտացոց: Եւ բազում պատուով եւ ընծայիւք եկն յաշխարհ եւ ի հայրենի աթոռ իւր, եւ եղև խաղաղութիւն երկրիս եւ խնդութիւն քրիստոնէից»<sup>31</sup>:

Յաւօք, մուսուլման պատմիչները չեն պահպանել հայ-մամլուքեան դաշնագրի բնագիրը, եւ նրանում ներառուած դրոյթներէ մասին կարելի է միայն ենթադրութիւններ անել: Այնուհանդերձ, ամփոփելով սկզբնաղբերային փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ պայմանագիրը կէտ է ներառել մոնղոլների եւ Իկոնիայի սէլջուկների վերաբերեալ զաղտնի տեղեկութիւնների փոխանցման, աւերուած բերդերի վերաշինման արգելքի մասին: Պայմանագրում, ըստ ամենայնի, առանձին կէտ է ներառուած եղել նաեւ մամլուքեան սուլթաններին պարբերաբար թանկարժէք ընծաներ եւ պարգեւներ մատուցելու վերաբերեալ: Այս մասին վկայութիւններ մամլուքեան պատմագրութեան մէջ իրապէս գտնուում են:

Զօրօրինակ, մամլուքեան պատմիչները սուլթան Բայբարսի՝ Կիլիկեան Հայաստանի վրայ 1275 թուականին երկրորդ անգամ արշաւելու պատճառաբանութիւններից մէկը համարում են հայոց արքայի կողմից ընծաների մատուցման պարտաւորութեան չկատարումը: Ինքը՝ սուլթանի վարքագիր Իբն Աբդ ալ-Չահիրը, այս մասին գրում է. «Սաի տէրը դադարել էր ուղարկել իր վրայ դրուած նուէրները, ինչպէս նաեւ խախտել էր զինադադարի այն պահանջը, ըստ որի նա չէր կարող վերակառուցել ոչ մի շինութիւն եւ ոչ էլ բերդ ամրացնել»<sup>32</sup>: Այս արշաւանքը նոյնպէս ծանր հե-

31 Տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ (յետայսու՝ ՀԶՀ), ԺԳ. դար, կազմեց Ա. Ս. Մաքեւոսեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1984, 359-360, ինչպէս նաեւ՝ Անդ, 588:

32 IBN 'ABD AL-ZĀHIR, *Al-Rawḍ*, 432; AL-NUWAYRĪ, *Nihāyat al-arab fi funūn al-adab*, ց. 30, Dār al-Kutub al-'Ilmiyya, Bayrūt 2004, 216-219; IBN AL-FURĀT, *Tārīh al-duwal wa-l-mulūk*, ց. 7, bi-tahqiq Quṣṭanṭīn Zurayq wa-'Izz al-Dīn Nağla,

տեւանքներ ունեցաւ Հայոց թագաւորութեան համար. թշնամական հրոսակախմբերը ոտնատակ արեցին երկրի տարածքի մեծ մասը՝ մեծ ու փոքր քաղաքներն ու բերդերը, եւ դաժան հաշուեյարդար տեսան հայ բնակչութեան հետ: Պատահական չէ, որ Հայոց արքայի դիւանապետը՝ Վահրամ Բաբունին, Բայբարսի այս արշաւանքն էլ աւելի աւերիչ ու ողբերգական է համարել, քան 1266 թուականինը:

«Զրոյր երկիրս ապականեալ  
 Բիւրապատիկ՝ չար գործեցեալ,  
 Քան գառաջին՝ ըն գոր տեսեալ»<sup>33</sup>:

Ընծաների նուիրաբերման սովորութիւնը, ինչպէս երեւում է 1275 թուականի դէպքերից յետոյ վերականգնուել է, այնուամենայնիւ, լարուածութիւնը երկու պետութիւնների տիրակալներին միջեւ չի պակասել: Բայբարսն այս ժամանակ դիւանագիտական գաղտնի կապի մէջ էր Ռումի սուլթանութեան վէզիր Մուլին ալ-Դին Փերուանէի հետ: Վերջինիս երկակի խաղի մէջ էր մտել մոնղոլների եւ մամուլքների հետ՝ Բայբարսին խոստանալով տէրը դարձնել նաեւ Իկոնիայի սուլթանութեան գահի, եթէ նա արշաւանք կազմակերպէր դէպի Ռում: Վէզիրի երկդիմի գործողութիւնների էութիւնը վաղուց հասկացել էր Լեւոն Բ.-ը՝ քանիցս զգուշացնելով մոնղոլական իշխանութիւններին: Պատահական չէ, որ Բայբարսին շարունակ Հայոց թագաւորի դէմ զրգուելով՝ հէնց նրա դրդմամբ է, որ Եգիպտոսի սուլթանը մէկ տարի առաջ արշաւել էր Կիլիկիա: Իզզ ալ-Դին իբն Շաղաղ պատմիչը հիջրայի 675 թուականի Սաֆար ամսի տակ (1276 թ. յուլիս-օգոստոս) գրում է. «Երբ սուլթանն իջեւանեց Հովսուս, նրան ներկայացան դեսպաններ Սսի տիրոջից՝ իրենց հետ նուէրներ ունենալով: Նա ընդունեց նուէրները, բայց դեսպանների հետ չհանդիպեց»<sup>34</sup>:

Bayrūt 1942, 25-33; AL-MAQRĪZĪ, *Kitāb al-sulūk li-ma'rifat duwal al-mulūk*, ց. 1.2, bi-tahqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda, Maṭba'at laġnat al-ta'līf wa-l-tarġama wa-l-naṣr, al-Qāhira 1957, 616-618.

33 Վ.Ա.ՀՐԱՄԱՅ ՐԱԲՈՒՆԻՈՅ Ռոտմաւոր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ 1859, 232:

34 IBN ŠADDĀD, 'IZZ AL-DĪN, *Tārīḥ al-Mālik al-Zāhir*, bi-tahqīq Aḥmad Ḥuṣayf (Die Geschichte des Sultans Baibars von 'Izz ad-dīn Muḥammad b. 'Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285), Franz Steiner Verlag, Wiesbaden 1983), 161.

Առաջ անցնելով նշենք, որ սուլթան Բայբարսի արշավանքը դէպի Ռում վերջապէս իրականութիւն դարձաւ 1277 թուականի գարնանը՝ ապրիլ-մայիս ամիսներին: Այնուամենայնիւ, Փերուանէի անհասկանալի եւ շատ իմաստներով անտրամաբանական գործողութիւնների պատճառով արշավանքը ոչ միանշանակ արդիւնքներ ունեցաւ: Այդ դէպքերը բաւական մանրամասն լուսաբանման են արժանացել արդի պատմագրութեան մէջ<sup>35</sup>:

Նմանօրինակ մի իրավիճակ էլ ստեղծուեց 1285 թ., երբ Լեւոն Բ. արքան, վախենալով մամլուքեան զօրքերի վերահաս ներխուժումից, յուսահատ փորձեր էր կատարում՝ խաղաղութեան շուրջ բանակցութիւններ սկսելու ալ-Մանսուր Կալաւուն (մահ. 1279-1290) սուլթանի հետ: Վերջինիս մօտ ուղարկուած բոլոր դեսպանութիւնները անյաջողութիւն էին ունեցել, եւ պատուիրակութեան անդամները ձերբակալուել էին՝ առանց որեւէ պատասխան տալու: Այս պարագայում Լեւոնը որոշում է միջնորդութեամբ լուծել հարցը: Միջնորդի եւ հաշտարարի դերն ստանձնում է Տաճարական ասպետական կարգի մագիստրոսը, ում նամակը նոյն ասպետական կարգի Կիլիկեան Հայաստանի առաջնորդը՝ kamandürը, հայոց արքայի կողմից փոխանցուած նուէրի հետ մէկտեղ ներկայացնում է Կալաւունին: Վերջինս ընդունում է հաշտարարութեան միջնորդութիւնը եւ համաձայնում խաղաղութեան շուրջ բանակցութիւններ սկսել. «Երբ մեր տէր սուլթանը պաշարել էր Հիսն ալ-Մարկարը, ժամանեց Հայոց երկրի տաճարականների բռնադատը՝ Սսի տիրոջ գրաւոր դիմումով: Նա Թաֆֆուրի կողմից ընծայ եւ գրութիւն էր քերել, ինչպէս նաեւ մէկ այլ գրութիւն տաճարականների հրամանատարից (իմա՝ մեծաւորից)<sup>36</sup>»: Պատմիչը ընծան բնութագրում է որպէս փառահեղ. այն

35 Մուհիմ ալ-Գիմ Փերուանէի գործունէութեանը առաւել հանգամանակից անդրադարձել են Կլոդ Կանեն ու Ռ. Ամիտայը, չնայած վեգրի ոչ բոլոր ֆայլերի ու ֆաղափական որոշումների տրամաբանութիւնն է հնարաւոր եղել միջնէ վերջ հասկանալ: Տե՛ս CAHEN, Cl., *La Turquie pré-ottomane* (Varia Turcica VII), Institut Français d'Études Anatoliennes, Istanbul 1988, 256-270 եւ AMITAI-PREISS, R., *Mongols and Mamluks: The Mamluk-İlkhānid war, 1260-1281*, Cambridge University Press, Cambridge 1995, 159-178, ինչպէս նաեւ՝ HILLENBRAND, C., *Mu'in al-Din Parwāna: The servant of two masters? in Miscellanea Arabica et Islamica, Dissertationes in Academia Ultrajectina prolatae anno MCMXC*, selegit et editit F. de Jong, Peeters Press, Leuven 1993, 267-274:

36 1273-1291 թուականներին Տաճարական ասպետական կարգի մագիստրոսի պաշտօնը զբաղեցրել է Գիյոմ դը Բոժէն (Guillaume de Beaujeu): Նա գո-

բովանդակում էր արծաթեղէն (արծաթեայ սպասք), կերպասեղէն եւ այլն<sup>37</sup>:

Բանակցութիւններն աւարտուեցին 1285ի հայ-մամլուքեան երկրորդ պայմանագրի կնքմամբ՝ տասը տարի ժամանակով, որով հայոց թագաւորութիւնն ընդունեց իր վասալական-ստորակայական կախուածութիւնը Մամլուքեան սուլթանութիւնից՝ 500 հազար դիրհամ տարեկան հարկ վճարելու պարտաւորութիւն ստանձնելով: Բացի դրամական հարկից՝ Կիլիկեան Հայաստանը պարտաւորուում էր նաեւ մամլուքեան իշխանութիւններին վճարել «ապրանքային ընծաների» (taqādim) տեսքով՝ եւս ընդհանուր 500 հզ. արփեքով: Մասնաւորապէս պայմանաւորուածութիւն է կայանում, որ Սիսն ամէն տարի պէտք է Կահիրէին մատակարէր նաեւ երկվարների (25 գլուխ), ջորիների (25 գլուխ), երկաթեայ պայտերի (10 հազար հատ) եւ դրանց մեխերի կոնկրետ խմբաքանակ: Սրան գումարւում էին սովորական նուէրները եւ գործուածքեղէնը<sup>38</sup>: Փաստօրէն, նուէրների մատուցումը 1285 թուականի տասնամեայ հաշտութեան պայմանագրով շարունակուել է:

Հայ-մամլուքեան հաշտութեան դաշնագիրը, ի հարկէ, ոչ թէ տասը, այլ միայն եօթ տարուայ յարաբերական խաղաղութիւն հաստատեց Կիլիկեան Հայաստանի եւ Մամլուքեան սուլթանութեան միջեւ: Երկու երկրների յարաբերութիւններում որոշակի լարուածութիւն առաջացաւ 1289ի գարնանը, երբ ալ-Մանսուր Կալաւունը տարածքային զիջումներ պահանջեց հայոց գահին Լեւոնին փոխարինած որդուն՝ Հեթում Բ-ից (1289-1307 ընդմիջումներով): Կալաւունն իր սոյն պահանջի ներկայացման պատճառ կարող էր մատնանշել պայմանագրով հայկական կողմի ստանձնած հարկային պարտաւորութիւնների զանցառումը, դրանց թերակատարումը կամ նորահռչակ արքայի կողմից սուլթանին ուղղուած ընծաների ուղարկումը: Արաբ պատմիչներից ալ-Մակրիզին այս առիթով գրում է, որ 1289ին, երբ Կալաւունը պաշարման մէջ էր առել Տրիպոլին, նրան են ներկայանում «Սսի դեսպանները՝ նրա գրասրտութիւնը խնդրելու: Սուլթանը նրանցից պահանջում է յանձնել Մարաշը, Բեհնան (գրչազրական սխալ է

հուել է ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի կողմից Աքրայի գրաւման ժամանակ՝ 1291ին:

37 IBN 'ABD AL-ZĀHIR, *Taṣrīf al-ayyām wa-l-'uṣūr fī sīrat al-Mālik al-Manṣūr*, bi-tahqīq Murād Kāmil, Muḥammad 'Alī al-Nagḡār, al-Qāhira 1961, 93.

38 Ա.նդ., 92-93, 99:

պէտք է լինի Բեհեսնան- Գ.Դ.) եւ սովորականի պէս վնասել հարկերը (al-qafī'a): Նա, դեսպաններին ընծաների (բնագրում՝ hala'a, այսինքն՝ «յարգանքի հագուստ» hilā', հագցրեց) արծաճացնելով, հետ ուղարկեց»<sup>39</sup>: Ալ-Մակրիզին, սակայն, հայոց արքայի պատասխանի մասին չի խօսում: Փոխարէնը, այդ մասին վկայութիւն ենք գտնում այլ մատենագիրներին՝ ալ-Նուվայրիի, ղպտի Մուֆադդալի եւ Իբն ալ-Ֆուրաթի մօտ: Նրանցից, օրինակ, Իբն ալ-Ֆուրաթը, որ հէնց երեւի ալ-Մակրիզիի սկզբնաղբերն է եղել, գրում է. «Վերադարձան Սսի դեսպանները քաղաքիւ մուտրներով եւ ներդուրիւն խնդրեցին, որ չեն կարող յանձնել Մարաշն ու Բեհեսնան, քայց [փոխարէնը] կարող են մեծ գումարներ վնասել ամէն տարի»<sup>40</sup>: Սուլթանը, հաւանաբար արդէն իսկ գոհացած լինելով կորզած նուէրներից, զիջում է, եւ բանը սրանով էլ աւարտում է: Կալաւունի յաջորդի՝ ալ-Աշրաֆ Խալիլի (կառ. 1291-1294) օրոք պայմանագրի յետագայ գործողութիւնը պահելն արդէն խիստ անխրատեսական է դառնում: Լեւանտի խաչակրաց վերջին կռուանների նուաճման յաղթարշաւը սուլթանը պսակում է հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլայի առմամբ՝ 1292ին<sup>41</sup>: Ալ-Աշրաֆն իր բիրտ արտաքին քաղաքականութեան սլաքները հայոց թագաւորութեան դէմ է ուղղում նաեւ յաջորդ տարում: Այս լուրը քաղաքական խժդժութիւնների բովում գտնուող հայոց

39 Տե՛ս AL-MAQRĪZĪ, *Kitāb al-sulūk*, ց. 1.3, 748: Հմմտ. AL-NUWAYRĪ, *Nihāyat al-arab*, ց. 31, 106; IBN AL-FURĀT, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, ց. 8, bi-tahqīq Qustanḥin Zurayq wa-'Izz al-Dīn Nağla, Bayrūt 1939, 81 եւ IBN AL-'ASSĀL, MUFADDAL IBN ABĪ AL-FADĀ'IL, *Al-Nahğ as-sadīd wa-durr al-farīd fimā ba'da tārīḥ ibn al-'Amīd* (Moufazzal ibn Abil-Faza'il, Histoire des sultans mam-louks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet, *Patrologia Orientalis*, t. 14, Paris, 1920), ց. 367 [p. 531], ինչպէս նաեւ նոյնի՝ *Al-Nahğ as-sadīd*, bi-tahqīq Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn 'Alī al-Sayyid, ց. 1-2, Dimaşq, Dār sa'd al-dīn 2017, 288-289: Հմմտ. STEWART, A. D., *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum II (1289-1307)*, Brill, Leiden 2001, 72-73:

40 IBN AL-FURĀT, *Tārīḥ al-duwal*, ց. 8, 81Թ

41 Այս մասին հանգամանօրէն տե՛ս ԴԱՆԻԷԼԵԱՆ, Գ., *Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմութեան արաբական սկզբնաղբերները*, ԲՈՁՈՅԵԱՆ, Ա. Ա., (խմբագիր), ՇՈՒԳՈՒԻՐՈՎ, Ռ. Մ., ՏԵՐ-ՂԵՒՈՒՆԻՅԵԱՆ, Վ. Ա., ԴԱՆԻԷԼԵԱՆ, Գ. Գ., *Կիլիկեան Հայաստանը սահմանակից պետական միաւորների ընկալումներում* (պատմաբանասիրական ակնարկներ), «Գիտութիւն» հրատ., 2016, 263-285:

արքունիքում մեծ տազնապով են ընդունում՝ ամէն ճիգը գործադրելով ալ-Աշրաֆ Խալիլին հանգստացնելու եւ վերահաս արշաւանքի մտքից նրան հեռու պահելու համար՝ չխորշելով անգամ մամուլքներին գիջել Բեհեսնի, Մարաշ եւ Թեյ Համդուն ռազմավարական բերդերը եւ համաձայնելով տարեկան հարկի կրկնապատկման պահանջին: Ըստ ալ-Այնի պատմիչի, երբ սուլթանը գտնուում էր Դամասկոսում, նրան է ներկայանում «թափուրի փոխարքան եւ մի խումբ հայոց մեծամեծերից»՝ ընդունելութեան արժանանալով. «Երբ ներս մտան,- շարունակում է նա,- համարւեցին հողը նրա առաջ՝ հանելով թափուրի նամակը, որն ընթերցուեց սուլթանի համար: Նրանում հայտնակութեան եւ հնազանդութեան ցուցադրում կար... Այնուհետ քերեցին այն, ինչ իրենց հետ ունէին՝ փառահեղ քիրեղապակի, ոսկէ եւ արծաթէ սպասք, դրուագագարդ ամանեղէն, հրաշալի գորգեր եւ կարպետներ, ինչպէս նաեւ այլ ընծաներ՝ արքաներին վայել»<sup>42</sup>: Ըստ ալ-Այնիի՝ նամակում հայոց թագաւորը գրում էր նաեւ, որ իր հողերն իրականում սուլթանի հողերն են, եւ ինքը միայն նրա կառավարիչն է այնտեղ<sup>43</sup>: Սուլթանը, անսալով մուսուլման էմիրների յորդորներին, համաձայնում է սեղմել իրեն մեկնուած ձեռքը՝ մանաւանդ որ հայկական կողմը այդքան մեծ գին էր վճարելու «չնեխուծման» եւ խաղաղութեան պայմանագրի ստորագրման դիմաց: Ժամանակակիցներից Յովհաննէս Երզնկացին շատ արժէքաւոր մանրամասներ է հաղորդում սուլթանի պատասխան նուէրների մասին, որով ընդունում էր «ծառայութեան»՝ հայոց արքայի առաջարկը. «Զի ի նոյն թուիս ԶԽԲ (1293), ի մուսս յունիս ամսոյ, եկին դեսպանք պատուաւորք ի սուլտանէն, եւ քերին աւժիտս մեծագին եւ պատուական գգեստուց դալաթ եւ դիլայ անձին թագաւորին, եւ զնորք նորա. քերին եւ թուղթս երդման գտուլտանին եւ զմեծամեծ ամիրայաց նորա, եւ հաստատեցին դաշինս սիրոյ եւ խաղաղութեան ընդ թագաւորն Հեթում, առին ի նմանէ երդումն հաստատութեան, ընկալան եւ պատմուհան գարդոյց ամեցայն եկեալքն ի սուլտանէն»<sup>44</sup>: Իր հերթին երդուելով պայմանագրի վրայ՝ ըստ Երզնկացու Հեթումը նորից նուէրներով ճանապարհում է սուլթանի դեսպաններին. «Առաքեաց եւ առատամիտ թագաւորն մեր քազում քեռինս արծաթուց եւ զանազան կտաւս ոսկեկար մետաքսից, եւ քազմութիւն ձիոց եւ ջորոց, եւ այլ իրս նորա-

42 AL-‘AYNĪ, *‘Iqd (MMA)*, թ. 3, 150-151.

43 Անդ:

44 ՀԶՀ, ԺԳ. դար, 712:

գիւտս, աղերս եւ հարկ սուլտանին: Եւ եղև այս սիրոյ] եւ խաղաղութեան հաստատութիւն եւ խնդութիւն մեծ յերկրիս Հայոց»<sup>45</sup>:

«Ընծաներով գեղուն» իրարայաջորդ այս առաքելութիւններէից մէկի ժամանակ էլ հաւանաբար մամլութեան իշխանութիւններին են յանձնուել նաեւ այն բերդերի բանալիները, որոնք հայոց իշխանութիւնները խոստացել էին փոխանցել սուլթանին: Արաբ պատմիչները հաստատում են սա: Մասնաւորապէս ալ--Ջազարին գրում է. «[Հիջրայի 692] Ռաշար ամսի 28ին (1293 Յուլիսի 4)' երկուշաբթի օրը<sup>46</sup>, Դամասկոս հասաւ Էմիր Սայֆ ալ-Դին Տուղանը, որի հետ էին նաեւ Սսի տիրոջ դեսպանները՝ իրենց հետ քերելով հարկը, ինչպէս նաեւ նուէրներ եւ ընծաներ: Հալէպի փոխարքայ ալ--Տաքրախի կողմից նրանց հետ էր վերջինիս ուսթագդարը, ով տեղեկացրեց նրանց կողմից Բեհեսնայ քերդի եւ նրա շրջակայքի յանձնման մասին»<sup>47</sup>:

Երբեմն սուլթանութեան հետ յարաբերութիւններում եղած լարուածութիւնը թօթափելու համար շատ լաւ հնարաւորութիւն էր միջնորդութիւնը երրորդ կողմի համար՝ մանաւանդ ճիշտ ընտրուած «դիւանագիտական ընծայի» օգնութեամբ<sup>48</sup>: Հէնց այսպիսի իրավիճակ է ստեղծուում 1299ի կէսերին, երբ Կիլիկիան դեռ ուշքի չէր եկել մամլութեան 1298 թուականի արշաւանքից, որի արդիւնքում առաջին անգամ կորցրել էր Ջահան գետից

45 Անդ:

46 Պատմիչը շփոթում է Ռաշարի 28-ը շաբաթ է եղել:

47 AL-ĞAZARĪ, *Tārīḥ Ḥawādīt al-zamān wa-anbā' uhu wa-wafayāt al-akābir wa-l-a'yān min abna' ihī al-ma'rūf bi-tārīḥ Ibn al-Ğazarī*, ց. 1, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba'a al-'Aşriyya, Şaydā-Bayrūt 1999, 151 եւ հմմտ. IBN AL-DAWĀDĀRĪ, *Kanz al-durar wa-ğāmi' al-ğurar*, ց. 8 (*Al-Durra al-zakiyya fi aḥbār al-dawla al-turkiyya*), bi-tahqīq Ūlriḥ Hārmān, al-Qāhira 1971, 342; ZETTERSTÉEN, K. V., *Beiträge zur Geschichte der Mamlukensultane in den Jahren 690-741 der Hıgra nach arabischen Handschriften*, E.J. Brill, Leiden 1919 (հետապսու պայմանականօրէն կանուանեմք AL-MU'ALLIF AL-MAĞHŪL, այն է՝ «Անանուս հեղինակ»), 23:

48 Եւստի մի միջնորդութիւն 1268-1269 թուականներին ձեռնարկել էր հայոց արքայ Հեթումը՝ փորձելով հաշտեցնել մոնղոլներին եւ մամլութեանը: Նրա այդ նախաձեռնութիւնը, սակայն, ձախողուել էր կողմերի բանակցալիմ գործընթացի նկատմամբ ունեցած ոչ կառուցողական վերաբերմունքի պատճառով: Այս մասին մանրամասն տե՛ս AMITAI-PREISS, R., *An exchange of letters in Arabic between Abaya İlkhan and sultan Baybars (A. H. 667 / A. D. 1268-1269)*, CAJ, vol. 38.1, 1994, 11-33:

հարաւ ընկած տարածքները: Ընդ որում սա տեղի էր ունեցել ներքաղաքական խիստ անախորժ եւ դաւադրութիւններով լեցուն մի դրութեան պայմաններում, երբ Սմբատը, բռնազրաւելով թագաւորական իշխանութիւնը (1296-1298), կուրացրել էր իր եղբայր Հեթում Բ-ին եւ բանտարկել, իսկ միւս եղբօրը՝ Թորոսին, խեղդամահ էր արել: Սմբատին իշխանութիւնից հեռացնելուց յետոյ՝ Փրանցիսկեան միաբանի կեանքի եւ աշխարհիկ իշխանութեան մէջ չկողմնորոշուող Հեթումը թագաւորութիւնն այժմ էլ յանձնում է չորրորդ եղբօրը՝ Կոստանդինին, ով կառավարում է երկիրը մօտ մէկ տարի (1298-1299) ստանձնելով մամուլեքների հետ բանակցելու դժուարին առաքելութիւնը: Դամակոսի պատմիչ այլ-Ջազարին (մահ. 1338) գրում է. «Ռամադան ամսի 4ին (1299 Յունիսի 5)՝ ուրբաթ օրը, Դամասկոս ժամանցիմ ֆրանկների դեսպանը՝ Կոստանդնուպոլսի տիրոջ<sup>49</sup> մօտից, որոնց հետ էին նաև Սսի տիրոջ դեսպանը՝ իրենց հետ բերելով շատ նուէրներ եւ ընծաներ, բազէներ եւ նուռակներ (բնագրում՝ al-[s]aqūra): Նրանց Եգիպտոս ուղարկեցիմ Ռամադան ամսի 6ին՝ շաբաթ օրը: Ասում էին, որ նրանք սուլթանի մօտ էին գնում՝ ծովափնեայ շրջանների հարցով, որպէսզի իրենք այնտեղ նաւահանգիստ ունենան, որ կիսով չափ իրենցը կը լինի, կիսով չափ՝ մուսուլմաններինը»<sup>50</sup>: Միջերկրականի ծովափին համատեղ օգտագործման նաւակայան ունենալու վերաբերեալ գաղափարն ակնյայտօրէն անհրաժեշտ է վերազրել Բիւզանդիայի կայսրին, ով, ինչպէս արաբ պատմիչներն են վկայում, հայոց արքայի միջնորդութիւնն էր խնդրել մամուլեքեան իշխանութիւններին իր դիմումը տեղ հասցնելու համար<sup>51</sup>: Հաւանաբար հայոց արքայի դեսպանին է վերաբերում «բազէների եւ նուռակների» մատուցումը Եգիպտոսի սուլթանին: Բազէներով որսը արաբական միջավայրում շատ յայտնի էր դեռ հնագոյն նախաիսլամական

49 Խօսքը Բիւզանդիայի Անդրոնիկոս Բ. Պալէոլոգոսի (կառ. 1282-1328) որդի եւ գահակից կայսր Միքայէլ Թ. Պալէոլոգոսի (կառ. 1294-1320) մասին է: Միքայէլը Հիթումի քնուայրն էր. նա ամուսնացած էր Հիթումի քոյր Ռիտայի հետ, ով ամուսնութիւնից յետոյ ընդունել էր Ռիտա-Քսենիա անունը:

50 Տե՛ս AL-ĞAZARĪ, *Hawādī*, ց. 1, ք. 440, հմմտ. AL-YŪNĪNĪ, *Dayl Mirāt al-zamān* (iārīh al-sanawāt 696-711 h./1297-1312 m.), ց. 1, bi-tahqīq Ḥamza ʿAbbās, Abū Zabī, 2007, ք. 203, AL-NUWAYRĪ, *Nihāyat al-arab*, ց. 31, ք. 237; AL-MAQRĪZĪ, *Al-Sulūk*, ց. 1.3, ք. 878: Տե՛ս նաև STEWART, A. D., *The Armenian Kingdom*, 134:

51 AL-YŪNĪNĪ, *Dayl Mirāt*, ց. 1, 203.

ժամանակներից: Մամլուքեան իրականութեան մէջ որսաբազէները նոյնպէս շատ թանկ էին գնահատուում, եւ սա շատ լաւ հասկանում էին նրանց տիրակալների հետ «գործ ունեցողները»<sup>52</sup>:

Եւ սա պատահական չէ, քանի որ Լեռնային Կիլիկիան յայտնի էր իր բազէներով: Դեռ Ուսամա իբն Մունկիզն (մահ. 1188) էր իր ինքնակենսագրական յուշերում գրում, որ իր հօր, որ Հիւսիսային Ասորիքում գտնուող Շայգարի էմիրն էր, եւ հայոց իշխաններ Թորոսի եւ նրա որդի Լեւոնի միջեւ բարեկամական յարաբերութիւններ են եղել, եւ նրանք անձնական նամակագրութիւն են ունեցել: Դրա հիմնական պատճառը նրա հօր հետաքրքրութիւնն էր որսաբազէների նկատմամբ. «Հայերն ամէն տարի նրան ուղարկում էին մի խումբ բազէներ՝ տաք կամ մօտ այդքան, որոնք իրենց ձեռքերի վրայ բերում էին հայ բազէարայծները... Մեզ նրանցից հասնում էին գեղեցիկ, բացառիկ բազէներ: Տարիների ընթացքում մեզ մօտ հաւաքուեցին լեռանցիներից բերուած բազէները...»<sup>53</sup>:

*Թանկագին ընծաների գործադրմամբ մամլուքեան սուլթանների հետ դիւանագիտական յարաբերութիւններ հարթելու*

52 H. ALKHATEEB-SHEHADA, *Mamluks and Animals: Veterinary Medicine in Medieval Islam*, Brill, Leiden 2003, 68-72.

53 USĀMA [I]BN MUNQIZ, *Kitāb al-I'tibār*, bi-tahqīq 'Abd al-Karīm al-Aštūr, al-Maktab al-Islāmī 2003, 308: Իր բազէներով եւ բազէներով կատարուող որսով յայտնի էր նաեւ Բուն Հայաստանը: Այս գրադմուքը յատկապէս տարածուած էր արեւմտեան եւ նախարարական շրջանակներում: Ղազար Փարպեցին, օրինակ, այդ մասին գրում է. «Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդուցն դաստիարակօք եւ ծառայիւք գալլ եւ այլ սնու ի թընջնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ բերիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան. եւ այսպէս աղլցեալք իւրաբանչիւր որսով՝ գնան ուրախացեալք»: Տե՛ս ՂԱՋԱՐ ՓԱՐՊԵՑԻ, *Պատմութիւն Հայոց եւ բողոք առ վահան Մամիկոնեան*, Թիֆլիս, 1908, էջ 22: Տե՛ս նաեւ՝ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Ա., *Սրտորդութիւնը հայկական լեռնաշխարհում ըստ հայ պատմիչների վկայութիւնների*, Բանբեր Երևանի համալսարանի, 1 (52), Երևան 1984, էջ 199: Արաբական աղբիւրներից էլ յայտնի է, որ արաբական տիրապետութեան ժամանակ Արմինիա ռատիկանութիւնից Աքրասեան խալիֆաներին ի շարս այլ նուէրների ուղարկում էին նաեւ 30 բազէներ: Տե՛ս Աբւ 'Abd Allāh al-Ġahšiyārī, *Kitāb al-wuzārā' wa-l-kuttāb*, bi-tahqīq Ḥasan al-Zayn, Dār al-fikr al-ḥadīf, Bayrūt, 1988, §. 185, ինչպէս նաեւ՝ A. Тер-Гевондян, *Армения и Арабский Халифат*, изд. АН АССР, Ереван, 1977, с. 200-201: Տե՛ս նաեւ ALKHATEEB-SHEHADA, H., *Mamluks and Animals*, p. 101:

չատ փորձեր էլ արդիւնաւէտ են դուրս եկել: 1307ին մոնղոլ զօրավար Բիլարղուի կողմից Հայոց արքայ Լեւոն Գ.ի եւ Հելթում պալլի դաժան սպանութիւնից յետոյ Հայոց թագաւորութեան գահին նստեց վերջինիս եղբայրը՝ Օշինը (1308-1320): Այս դժուարին կացութեան մէջ, երբ դեռ ամբողջովին փարատուած չէր կասկածը, որ Բիլարղուի արարքը մոնղոլական Իլխանութեան հետ կիլիկեան Հայաստանի յարաբերութիւնների խաթարում չէր նշանակում, Օշինը հարկադրուած էր միջոցներ ձեռնարկել Մամլուքեան սուլթանութեան հետ յարաբերութիւնները փոքրիչապէս բարելաւելու ուղղութեամբ՝ կանոնաւոր վճարել հարկերը, հաճոյանալ սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրին՝ աւելորդ անգամ չզբոսելու համար նրան Հայոց պետութեան դէմ: Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբիի Husn al-tawaşşul երկում պահպանուած մի վաւերագրի եւ ժամանակի պատմական սկզբնաղբիւրների մի շարք օժանդակ վկայութիւնների հիման վրայ վերջերս կատարուած մի հետազոտութեան մէջ անգամ եզրակացրել ենք, որ Օշինը հաւանաբար չի խորշել անգամ սուլթանից «իշխանութեան տուչութիւն» հայցելուց<sup>54</sup>: Հայոց նորընծայ արքայի՝ Հայ-մամլուքեան յարաբերութիւնների «հարթեցման» ուղղուած ճիգերը կարծես թէ արդիւնք են տալիս:

Այսպէս, հիջրայի 708 թուականի (1308/1309) տակ արդէն մամլուքեան մատենագիրները գրում են թանկագին նուէրներով կահիրէ շտապող Հայ դեսպանների մասին: Նրանցից Բայբարս ալ-Մանսուրիի մօտ կարդում ենք. «[Այդ թուականին] եկան Սսի տիրոջ դեսպանները՝ նրա համար սահմանուած հարկով եւ նուէրներով՝ մի ոսկեանոյ տարայ եւ կուժ՝ թանկագին գոհարներով պահուեալ: Նըրանց ժամանումը Ջոււմադա I ամսին էր (17.10.1308-15.11.1308): Նա նրանց պատուոյ հանդերձներ տուեց, եւ վերադարձուեցին նրանց ուղարկողի մօտ»<sup>55</sup>: Յաջորդ տարուայ դէպքերի շարադրանքում նոյն հեղինակն արձանագրել է. «[Այդ թուականին] եկան Սսի իշխողի դեսպանները՝ սահմանուած հարկով: Նրանք բերել էին նաեւ նուէր,

54 Տե՛ս ԴԱՆԻԷԼԵԱՆ, Գ., *Եգիպտոսի եւ Ասորիի սուլթանից կիլիկիոյ հայոց արքային ուղղուած երկու վաւերագիր*՝ ըստ Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբիի Husn al-tawaşşul երկի եւ նորայայտ սկզբնաղբիւրային փաստերի (պատրաստում է հրատարակութեան, 2021):

55 Տե՛ս BAYBARS AL-MANŞŪRĪ, *Zubdat al-sikra fī tārīḥ al-ḥiğra*, bi-taḥqīq Dunāld Rūšārdz, Bayrūt 1998 402 եւ հմմտ. AL-NUWAYRĪ, *Nihāyat al-arab*, ց. 32, 102; AL-MAQRĪZĪ, *Al-Sulūk*, ց. 2.1, 43:

թանկարժեք իրեր եւ այլն: Նրանց պատուի արժանացրին եւ ուղարկեցին նրանց ուղարկողի մօտ»<sup>56</sup>; *Հիջրայի 710 թրուականի տակ ալ--Մակրիզի պատմիչը գրում է սուլթանական արքունիք ժամանած եւս մի հայկական դեսպանութեան մասին, որի անդամները նուէրներից զատ* («նսկեճոյլ տարայ եւ յախճապակէ կուժ՝ գոհարներով դրուագուած») *յանձնեցին նաեւ հայոց թագաւորի շնորհաւորական նամակը՝ ուղղուած սուլթան ալ-Նասիր Մուհամմադին (երրորդ շրջան՝ 1310-1341)*<sup>57</sup>: «Իշխանութեանը վերադառնալու կապակցութեամբ, որին պատասխանեցին շնորհակալութեամբ»<sup>58</sup>: Այս նուէրները վկայում են Կիլիկեան Հայաստանում ապակեգործութեան եւ դրուագագործական արուեստի զարգացման բարձր մակարդակի եւ *ինքնատիպութեան մասին:*

Այնուամենայնիւ, միւս արաբալեզու աղբիւրների հետ համեմատութիւնից եզրայանգում ենք, որ իրականում ամէն ինչ այնքան հարթ չի եղել, ինչպէս որ ալ-Մակրիզին է ներկայացնում իր վկայութեան մէջ: Բայքարս ալ-Մանսուրին իր *Al-Tuhfa* երկում գրում է, որ 710ի Հալէպ ներկայացած հայ դեսպանները սահմանուած հարկը մասամբ էին բերել, ինչը զայրացրել է սուլթանին, եւ նա հրամայել է Հալէպի «փոխարքայ» Ասանդամուր Գուրջիին նոր արշաւանք կազմակերպել դէպի Կիլիկիա<sup>59</sup>: Հայոց արքան, ինչպէս երեւում է, այդ մասին իմանալով շտապել է ուղարկել հարկի մնացած մասը: 1311ին Համայի «կառավարչութիւնը» ստանձնած Աբու ալ-Ֆիդան հաստատում է, որ *ինքն ստացել է իր մասնաբաժինը* («ջորիներ եւ կերպասեղէն»)՝<sup>60</sup>:

- 56 BAYBARS AL-MANŞÜRİ, *Zubdat al-fikra*, §. 413, ինչպէս նաև նոյնի՝ *Kitāb al-Tuhfa al-mulūkiyya fī al-dawla al-turkiyya*, bi-tahqīq ‘Abd al-Ḥamīd Šālih Ḥam-dān, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, al-Qāhira 1987, 193:
- 57 Սուլթան ալ-Նասիրի կառավարման երրորդ շրջանի մանրամասն ուսումնասիրութիւնը տե՛ս LEVANONI, A., *A Turning Point in Mamluk history: The Third Reign of al-Nāṣir Muḥammad ibn Qalāwūn (1310-1341)*, E. J. Brill, Leiden 1995:
- 58 AL-MAQRĪZĪ, *Kitāb al-sulūk*, §. 2.1, §. 86.
- 59 Տե՛ս BAYBARS AL-MANŞÜRĪ, *Al-Tuhfa*, 217-218: Հմտ. AL-MAQRĪZĪ, *Kitāb al-sulūk*, §. 2.1, 90-91; IBN TAGRĪ BIRDĪ, *Al-Nuğūm*, §. 9, §. 21-22:
- 60 Տե՛ս ABŪ AL-FIDĀ’, *Tārīḥ Abī al-Fidā’ al-musammā al-Muḥtaṣar fī aḥbār al-baṣar*, §. 2, bi-tahqīq Maḥmūd Dayyūb, Dār al-kutub al-‘ilmiyya, Bayrūt, 1997, §. 407, ինչպէս նաև՝ ՆԱԼԲԱՆԻՆԵԱՆ, Լ. Թ., *Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին (Եակուտ ալ-Համաւի, Աբու-Ֆիդայ, Իբն շադդադ)*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան 1965, 246):

Իսկ ալ-Ինձինի պատմիչի երկում՝ 711ի տակ, մէկ այլ վկայութիւն ենք գտնում հարկերով Կահիրէ շտապող հայկական ղեսպանութեան մասին՝ յաւելեալ անհաւանական ու յորինածին տեղեկութեամբ. «Ռաբի առաջին ամսի երեքին (1311 Յուլիսի 20) - Դամասկոս հասան Սսի տիրոջ ղեսպանները, Սսի տիրոջ քրոջ եւ նրա հօրնորոք դստեր հետ, որպէսզի սուլթանի մօտ հարեմ մտնեն (ընդժուածը մերն է-Գ.Դ.) իրենց հետ տանելով ձիեր, ջորիներ, նուէրներ, ընծաներ եւ այլն, եւ յայտնեցին նզովեալ թշնամու (մոն-ղոլներին-Գ.Դ.) շարժի մասին»<sup>61</sup>:

Հայկական ղեսպանութիւնները սուլթանական արքունիք են այցելել զանազան նպատակներով: Ընդ որում, որքան ներկայացուցչական էր պատուիրակութեան կազմը, այդքան շատ էին բանակցութիւններում յաջողութեան հասնելու հնարաւորութիւնները: Մի այդպիսի խիստ ներկայացուցչական ղեսպանազնացութիւն դէպի Կահիրէ տեղի է ունեցել 1323ին:

Այսպէս, 1322ին մամլուքեան բանակն արշաւում է Կիլիկիայ: Այս արշաւանքը ծանր հետեւանքներ է ունենում հայոց թագաւորութեան համար: Մասնաւորապէս զբաւում է եւ աւերածութեան ենթարկում երկրի տնտեսական հզօրութեան եւ բարեկեցութեան զբաւականը՝ Այաս նաւահանգիստը: Հայոց Լեւոն Դ անչափահաս արքայի անունից որպէս պաշտօնական պատուիրակութեան ղեկավար Կահիրէ է մեկնում անձամբ հայոց կաթողիկոսը՝ Կոստանդին Լամբրոնացին (Դրազարկեցին)՝ հաշտութեան շուրջ ալ-Մալիք ալ-Նասիր սուլթանի հետ բանակցելու. «Կաթողիկոս տէր Կոստանդին Լամբրոնացին: Սա չոգաւ յեգիպտոս առ նասր սուլտանն եւ արար սէր եւ խաղաղութիւն ընդ Լեւոն թագաւորին տղայոյ»<sup>62</sup>:

Կիլիկիայից Կահիրէ ժամանած նուիրակութեան մասին յիշատակութիւն ունի մամլուքեան պատմիչ Իբն ալ-Դաւադարին: Նա, սակայն, պատուիրակութեան ղեկավարի մասին ոչինչ չի հաղորդում. «Այս թուականին ժամանեցին Սսի ղեսպանները Բարձր Դուռ: Նրանք իրենց հետ ընտիր նուէրներ էին բերել եւ հաշտու-

61 Տե՛ս AL-YŪNĪNĪ, Dayl (Abū Zabī), ց. 2, ք. 1430: Հմմտ. AL-BIRZĀLĪ, *Al-Muqtafi li-tārīḥ al-ṣayḥ Šihāb al-Dīn Abī Šāma al-ma'rūf bi-tārīḥ al-Birzālī*, ց. 4, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba'a al-'Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2006, ք. 13 (ընդգծուած հատուածը բացակայում է):

62 ՄԱՄՈՒՆԷԼ ԱՆԵՑԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ, *Ժամանակագրութիւն, ժախտասիրութեամբ Կ. Մաթեւոսեանի, «Նաիրի», Երևան 2014, 275*

թիւն էին խնդրում»<sup>63</sup>: *Հայկական դեսպանութեան մասին աւելի մանրամասն է պատմում ալ-Նուվայրին*. «[Հիջրայի] 723ի Ջումադա I ամսի վերջին տասնօրեակում սուլթանական արժունիք ժամանեցին հայոց իշխողի դեսպանները, որոնց մէջ նաեւ նրանց խալիֆան՝ որպէս [պատուիրակութեան] ղեկավար, ինչպէս նաեւ քազաւորի մայրը եւ մի խումբ նրանց մեծամեծերից՝ խնդրելու սուլթանին իրենց բարեգթութիւն ողորմել, որպէսզի իւրաքանչիւր տարի սուլթանական գանձարան մուծեն 2 հարիւր հազար դիրհամ՝ սովորականի պէս ջորիների երամակներով, երկաթեայ պայտերով, ինչպէս նաեւ այլ նուէրներով»<sup>64</sup>: *Հայոց հոգեւոր պետի առաքելութիւնը, կարելի է ասել, լիովին անօգուտ չի անցնում, մանաւանդ որ նա, սուլթանի բարեացկամութիւնը շահելու նպատակով, ձեռնուռնայն չէր գնացել: Ալ-Մակրիզին այս առիթով գրում է. «Այդ ժամ մատուցուեց Սսի [իշխողի] հարկը՝ նրա դեսպանի ձեռքով, ով քանկարժէք գոհարեղեն էր բերել»<sup>65</sup>:*

*Սուլթանը համաձայնում է հաշտութեան պայմանագիր կընքել Կիլիկեան Հայաստանի հետ՝ թելադրելով իր պահանջները: Բաւարարելով Այասը վերաշինումը թոյլատրելու կաթողիկոսի խնդրանքը՝ նա հրաժարւում է Այաս նաւահանգստից ստացուող տարեկան հասոյթը կիսելու կաթողիկոսի առաջարկից: Փոխարէնը նա նաւակայանի տարեկան հասոյթից պահանջում է 800 հգ. դիրհամ՝ ի լրումն որպէս տարեկան հարկ վճարուող 1 մլն. դիրհամի: Դեսպանագնացները հարկադրուած էին ընդունել խաղաղութեան դաշնագրի այս դրոյթը՝ էլ աւելի ծանր հարկային լծի տակ ղենելով երկիրը: Բարսեղ վարդապետ անունով մի ժամանակակից գրիչ 1325 թ. հեղինակած մեկնական իր երկում յիշատակագրել է. «Եւ գրեցաւ սա ի վանս, որ կոչի Մաշկուոր, ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ կաթողիկոսի Դրագարկեցոյ, որ բազում աշխատութեամբ ջանայ եւ հնարի զխաղաղութիւն այսմ աշխարհի: Որ եւ միջեւ ի Մսր առ սուլտանն անձամբ անձին գնացեալ, ոչինչ համարելով զաշխատութիւն, քէպետ ծեր եւ տկար էր մարմնով»<sup>66</sup>:*

63 IBN AL-DAWĀDĀRĪ, *Kanz al-durar*, ց. 9, 308.

64 AL-NUWAYRĪ, *Nihāyat al-arab*, ց. 33, 46.

65 AL-MAQRĪZĪ, *Al-Sulūk*, ց. 2.1, 246.

66 *ՀԶԷ, ԺԴ. դար, Մասն Ա. (1326-1350)*, կազմողներ՝ Լ. Խաչիկեան, Ս. Ղազարոսեան, Երևան 2020, 495:

Դիւանագիտական ընծաներ կարող էին լինել նաեւ մարգիկ՝ որպէս ստրուկներ (mamlūkներ), Մամլուքեան իշխանութիւններից կողմից քաղաքական հետապնդման եւ հետախուզման մէջ գտնուող անձինք, թշնամական գերութիւնից ազատուած մամլուքեան էմիրները եւ այլ իշխանաւորները, որոնց ազատագրումն ու փոխանցումը կարող էր էլ աւելի փառահեղ նուէր եւ ծառայութիւն դիտարկուել, քան որեւէ թանկագին ընծայ կամ նուէր: Հայկական իշխանութիւններից Կահիրէ յղուած ընծաների թւում յաճախ են նկարագրուում մոնղոլական գերութիւնից հայտ արքայի միջնորդութեամբ ազատ արձակուած մամլուքները: Օրինակ, Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Չահիրն ալ-Աչրաֆ Խալիլ սուլթանի կեանքին նուիրուած իր անաւարտ մնացած երկում՝ հիջրայի 690 թուականի տակ (1291), գրում է. «Սաի տիրոջ հետ կապուած որոշ պարագաներ: Դրանցից էր այն, որ նա մոնղոլների մօտ էր գնացել, եւ այդ ժամանակ ժամանեց իր երկիրը՝ իր հետ բերելով մուսուլման գերիների (ընդգծումը մերն է-Գ.Գ.): Նա նրանց մի մասին ազատ արձակեց, միւսներին բաշխեց իր բերդերում: Նա իր երկու դեսպաններին՝ Լիֆուսին եւ Միւնջալին<sup>67</sup>, ուղարկեց սուլթանական արքունիք՝ Սաի կողմից ուղարկելով [սահմանուած] հարկաչափից հարիւր հազար դիրհամ, իսկ ձիերից եւ ջորիներից՝ 58 գլուխ՝ այդ թւում 10ը որպէս նուէր»<sup>68</sup>: Այն մուսուլման գերիները, որ, ինչպէս պատմիչն է գրում, հայոց արքայի կողմից «բերդերում էին բաշխուել» մի յարմար պահի, անշուշտ, օգտագործուելու էին մամլուքեան իշխանութիւնների հետ բանակցութիւններում՝ հայ ռազմագերիների հետ փոխանակելու կամ որեւէ այլ հարցով նրանց բարեացակամութիւնը շահելու նպատակով:

67 «Միւնջալ»․ իսկ գուցէ գրչագրական սխալ է եւ խօսքն այստեղ Սմբատ Սպարապետի որդի Օշինի՝ սենեշալի (գումղատարի) մասին է․ դժուար է ստել: Տե՛ս 222, ԺԳ. դար, էջ 630, ինչպէս նաեւ՝ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Լ., *Խաչակիրները եւ հայերը*, հտ. Բ., Պատմա-ֆաղափագիտական հետազոտութիւն (Հայկական մատենաշար Գալուստ կիւլպէնկեան հիմնարկութեան), Երեւան 2007, 342-343: Օշինը սպանուել է 1307 թուականին Բիլարդուի կազմակերպած դաւադրութեան արդիւնքում:

68 IBN 'ABD AL-ZĀHIR, *Al-Altāf al-Ḥafīyya min al-sīra al-šarīfa al-sultāniyya al-Malikiyya al-Āsrafiyya* (Ur 'Abd Allah b. 'Abd ez-Zāhir's biography över Sultanen el-Melik al-Āsraf Ḥalīl, hrsg. von Axel Moberg, Gleerupska Universitetsbokhandeln, Lund 1902, 44.

«Գերիների ազատագրմամբ» խնդիրներ կարգաւորելու լաօօրինակ են 1306 թուականի դէպքերը, որ հետեւեալ նախապատմութիւնն ունէին: 1304–1305 թուականների ընթացքում Մամլուքեան իշխանութիւնները երկու արշաւանք նախաձեռնեցին Կիլիկեան Հայաստանի դէմ՝ պատժելու համար հայերին Ղազան խանի ասորիքեան արշաւանքներին նրանց բերած մասնակցութեան համար: 1304ի արշաւանքից յետոյ հայոց արքայ Հեթում Բ-ը, ինչպէս ալ-Իւնիին, իբն ալ-Դաւադարին եւ այլք են հաղորդում, ստիպուած է եղել զինադադարի պայմանագիր կնքել այն դրոյթով, որ Ջահան (Պիրամոս) գետից Հալէպ ընկած բոլոր բերդերն<sup>69</sup> անցնում են Սուլթանութեանը: Պայմանագրի մէկ այլ դրոյթով հայոց արքան պարտաւորուել է նաեւ շուտափոյթ կերպով վճարել երկու տարուայ հարկը<sup>70</sup>:

Սուլթանական զօրքերը Կիլիկիա են արշաւում նաեւ յաջորդ տարում: Պատճառը, ինչպէս արաբալեզու աղբիւրներն են յայտնում, զինադադարի պայմանագրով սահմանուած հարկերի ուշացումն էր: Ի տարբերութիւն նախորդ տարուայ արշաւանքի՝ այս մէկը մամլուքեան զօրքերի հրամանատար Կաշթամուր ալ-Շամսիի անհեռատես գործողութիւնների պատճառով անփառունակ վախճան է ունենում մուսուլմանների համար՝ աւարտուելով մի շարք էմիրների գերեվարութեամբ<sup>71</sup>: Իմանալով այս մասին՝

69 Պատմիչներից ալ-Յունիին (ինչպէս նաեւ ալ-Քուքուրին) եւ Իբն ալ-Դաւադարին նշում են այս պայմանագրով մամլուքների անցած «եօք բերդերից» մի քանիսի անունները՝ Նուշայմա, Նուկայր (Nuqayr, որ անկասկած Նիլին է-Գ. Դ.) եւ Ջանջաֆր (մեզ անյայտ է- Գ. Դ.): Յղումները տե՛ս յաջորդ ծանօթագրութեան մէջ: Այս բերդերը գրաւուել էին նաեւ մամլուքների 697 թ. /1298 թ. արշաւանքի ժամանակ, քայց յետագայում Ղազան խանի ասորիքեան արշաւանքների արդիւնքում հայերը կրկին տեր էին դարձել դրանց: 1298 թ. մամլուքների կողմից գրաւուած այս բերդերի մասին տե՛ս STEWART, A. D., *The Armenian Kingdom*, 117-122, ինչպէս նաեւ՝ ՆԱԼԻՍԱՆԻՅԱՆ, Հ. Թ., *Արաբական աղբիւրները*, 242-244:

70 Տե՛ս AL-YŪNĪNĪ, *Dayl (Abū Zabī)*, ց. 2, 768, ինչպէս նաեւ՝ AL-KUTUBĪ, *‘Uyūn al-Tawārīḥ (A 2922)*, 21, Topkapı Sarayı Kütüphanesi, Ahmed III, İstanbul, քերթ 120a; IBN AL-DAWĀDĀRĪ, *Kanz al-durar*, ց. 9, 111; AL-BIRZĀLĪ, *Al-Muqtafī*, ց. 3, 259; IBN AL-‘ASSĀL, MUFADDĀL IBN ABĪ AL-FADĀ’IL, *Al-Nahğ al-sadīd* (PO, t. 20, fasc. 1, Paris 1929), 92-93 [598-599], ինչպէս նաեւ նոյնի՝ *Al-Nahğ al-sadīd* (2017), ց. 2, 433-434; IBN KAṬĪR, *Al-Bidāya wa-l-nihāya*, ց. 18, bitahqiq ‘Abd Allāh ibn ‘Abd al-Muḥsīn al-Turkī, Dār Hağar 1998, 35:

71 Տե՛ս BAYBARS AL-MANŪRĪ, *Zubdat al-fikra*, 383, ինչպէս նաեւ նոյնի՝ *Al-Tuhfa*, 177; IBN AL-‘ASSĀL, MUFADDĀL IBN ABĪ AL-FADĀ’IL, *Al-Nahğ al-*

ալ-Նասիր Մուհամմադը հրահանգել է Հայէպի փոխարքային լայնածաւալ պատերազմ սկսել հայոց թագաւորութեան դէմ: Այս մասին իմանալով՝ հայոց արքան շտապել է «ուղարկել հարկը եւ ներողութիւն խնդրել՝ պատճառաբանելով, թէ մարտն իր նախաձեռնութեամբ չէ, որ տեղի է ունեցել, այլ թաթարների: Նա խոստացաւ խորամանկել եւ գերելարուած [մամլուխ] էմիրներին հետ բերել: Այդ բանից յետոյ մուսուլմանական զօրքը հետ վերադարձաւ Կահիրէ»<sup>72</sup>:

Աղբիւրներից յայտնի է դառնում, որ Հայոց արքան կատարել է իր խոստումը: Իբն ալ-Դաւադարի պատմիչը իսլամական 706ի (1306/1307) տակ գրում է. «Սաֆար ամսի 13-ին (1306 օգոստոսի 24) ժամանեցին Սսի դեսպանները՝ հարկով՝ [շուրջ] 600 հզ. դիրհամ, ինչպէս նաեւ ընծաներով եւ նուէրներով, ջորիներով, ուղտերով՝ [բեռնուած] պայտերով եւ մեխերով, թուով 40 ուղտ եւ 170 մուսուլման գերիներ (ընդգծումը մերն է- Գ. Դ.)»<sup>73</sup>:

Միջնադարեան արեւելեան հասարակութեան մտածելակերպի համար սովորական էր, որ երկու տիրակալների յարաբերութիւններում մարդիկ դիւանագիտական ընծայ համարուէին նաեւ հանգուցեալ վիճակում՝ օրինակ, Սուլթանութեան թշնամի կամ դաւաճան համարուող անձինք: Աւելի սահմուկեցուցիչ էր մարդկանց մարմնի մասերի մատուցումը՝ որպէս սուլթանի նկատմամբ ունեցած հպատակութեան կամ ընդհանուր թշնամու դէմ տարած յաղթանակի խորհրդանիշ: Այսպիսի մի դէպք պատահել է, օրինակ, 1329ին, երբ հայոց Լեւոն Դ. արքան դաժան հաշուէյարդար տեսաւ իր խնամակալների՝ Օշին պայլի եւ Կոստանդին Գունդստաբլի հետ՝ առաջինի կտրուած գլուխն ուղարկելով սուլթան ալ-Նասիր Մուհամմադին, երկրորդինը՝ Իրանի Աբու Սաիդ իլխանին. «Ի Չէթ թուին առաքեաց թագաւորն Լեւոն զօրս ի յԱտանոյ եւ ըմբոնեաց զՕշին՝ Տէրն Կոսիկօսու, եւ զեղբայր նորին զԿոստանդին գունդստաբլին գունդստապլն, եւ եսպան ի սադրելոյ իշխանացն եւ ի քսու

sadīd (PO, t. 20), 616-617 [110-111], ինչպէս նաեւ նոյնի՝ *Al-Nahğ al-sadīd* (2017), ց. 2, 447-448; AL-‘AYNĪ, *‘Iqd (MMA)*, ց. 4, 381; AL-MAQRĪZĪ, *Al-Sulūk*, ց. 2.1, 16:

72 Տե՛ս AL-MAQRĪZĪ, *Al-Sulūk*, ց. 2.1, 16 եւ հմմտ. BAYBARS AL-MANŞŪRĪ, *Zubdat al-fikra*, ց. 384, ինչպէս նաեւ նոյնի՝ *Al-Tuhfa*, 177-178, ինչպէս նաեւ՝ AL-‘AYNĪ, *‘Iqd (MMA)*, ց. 4, 382-383 (մէջբերում է Բայբարս ալ-Մանսուրիի վկայութիւնը):

73 IBN AL-DAWĀDĀRĪ, *Kanz al-durar*, ց. 9, 146:

արանց, եթէ խորհեալ են բառնալ զքեզ եւ ինքեանք քագաւորել, եւ առաքեաց զՕշնին գլուխն ի Մըսր՝ առ Մելիք Նասր սուլտանն, եւ զեղբոր նորին՝ յարեւելս՝ առ Բուսայիտ դանն...»<sup>74</sup>: Մտքատի «Տարեգրքի» շարունակողի վկայութեամբ դէպքը կատարուել է հայոց 1329 Յունուարի 26ին<sup>75</sup>: Իսկ Հեթում պատմիչ Կոռիկոսցու ժամանակագրութեան շարունակողներից մէկը գրում է, որ Լեւոնը երկու իշխանների գլուխներն էլ Եգիպտոսի սուլթանին է մատուցել<sup>76</sup>: Հարկ է նշել նաեւ, որ Օշինն ու Կոստանդինը Հեթում Կոռիկոսցու որդիներն էին:

Այս դէպքի մասին տեղեկութիւն են պահպանուել նաեւ արաբական պատմագրութեան մէջ: Մասնաւորապէս Աբու ալ-Յիդալի Al-Muhtasar երկում պահպանուած հաղորդումից եզրակացնելի է, որ Լեւոն Դ-ի յիշեալ քայլը խիստ հաճոյ է թուացել Եգիպտոսի եւ Ասորիքի սուլթանին, եւ նա նուէրներով եւ, ինչպէս մեր մէկ այլ հետազոտութեան մէջ ենք ցոյց տուել, «իշխանութեան տուչութեան» մասին վկայող փաստաթղթի տրամամբ է պատասխանել հայոց արքային, ով, անշուշտ, այդ հարցով դիմել էր նրան<sup>77</sup>: «Այս թուականին չափահասութեան հասաւ Սսի պատանի տէրը՝ Լիֆուն իբն Ուշինը: Նրա վրայ խնամակալ էր նշանակուած ալ-Քարքի (իսնա՝ Կոռիկոսի) տէրը, որը փոքր բերդ է՝ ծովին մերձ՝ Սսի երկրի հիւսիս-արեւմտեան կողմերում, որ սահմանակցում էին Կարամանեանների երկրին: Ալ-Քարքի յիշեալ տէրը տիրացել էր Սսի տիրոջ քագաւորութեանը՝ նշեալ պատանու մանկահասակութեան հիմքով: Երբ այս թուականը եկաւ (նկատի ունի չիջրայի 729 -Գ.Դ.), ուժեղացաւ պատանին եւ սպանել տուեց ալ-Քարքի տիրոջը, այնուհետ նրա եղբորը (իսնա՝ Կոստանդին գունդասարին): Նա ալ-Քարքի տիրոջ գլուխն ուղարկեց սուլթանին: Սուլթանն լիր հերթին սուլթանական արքունիքի միւսմանդար (սենեկապետ) էմիր Շիհար ալ-Դին Ահմադի հետ պատիւներ, սուր, նոյնպէ՛ իր թամբով եւ

74 Տե՛ս ՍՄՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ, *Ժամանակագրութիւն*, 275-276 (դրուած է 1330 թուականի տակ) եւ հմմտ. Մանր *Ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ.*, հտ. I, կազմեց Վ. Ա. Յակոբեան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան 1956, 88: Տե՛ս նաեւ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Լ., *Խաչակիրները*, հտ. Բ, 401-404:

75 Տե՛ս ՄՐԱՏԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ *Տարեգրք*, ի լոյս ընծանեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ 1859, 131:

76 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Կ., *Հեքում Պատմիչ Կոռիկոսցին եւ նրա ժամանակագրութիւնը*, «Մուղին» հրատ., 2011, 58, ինչպէս նաեւ՝ ՄԺ, հտ. I, 88:

77 ԳԱՆԻԷԼԵԱՆ, Գ., *Նշանակման կարգադրութիւն*, 2021:

սանձով ուղարկեց: Շիհար ալ-Դիմը դրանցով ֆանապարհ ընկաւ Ս-սի պատանի տիրոջ մօտ: Սսի տէրը հագաւ «պատուոյ հանդերձը», բարձրացրեց սուրն ու համբուրեց հողը: Նա հեծնեց իրեն ողորմուած երիվարը եւ նրա հոգին դրանով գորեղացաւ: Յիշեալ Շիհար ալ-Դիմ սենեկապետը [նոյնպէս] շատ շնորհների արժանացաւ՝ վերադառնալով սուլթանական արքունիք: Նա Համայով անցաւ՝ սուլթանական արքունիք գնալու ֆանապարհին Ջումադա II ամսի 12-ին՝ հինգշաբթի օրը (1329 Ապրիլի 13)»<sup>78</sup>, - գրում է Համայի փոխարքայ Աբու ալ-Ֆիդան: Պետական կառավարման խորհրդանիշներ հանդիսացող երիվարի, սրի եւ «պատուոյ հանդերձների» ընծայումը սուլթանի կողմից յաւելեալ ապացոյց է, որ հաստատում է Լեւոնի՝ «իշխանութեան տուչութիւն» ստանալու համար Եգիպտոսի սուլթանին դիմած լինելու մեր վերոբերեալ պնդումը:

Դեսպանընկալութեան մամուլքեան արարողակարգը, ինչպէս վերեւում ենք նշել, խիստ էր, եւ նրա կանոնների խախտումը կարող էր դիւանագիտական առաքելութեան տապալման պատճառ դառնալ: 1335-1336 թուականներին մամուլքները մի քանի արշաւանք կազմակերպեցին դէպի Կիլիկիա՝ նպատակ ունենալով Կիլիկիայից վերջնականապէս պոկել Ջահան գետից հարաւ ընկած տարածքները: Օրինակ, այդպէս եղաւ 1336ին, երբ բանակցութիւններ վարելու նպատակով Եգիպտոսի եւ Ասորիքի սուլթանի հետ հանդիպելու է ուղարկւում հայոց ջամբուլայը՝ Հէթում Ախտուց տէրը: Վերջինս սա արձանագրել է իր ժամանակագրութեան մէջ. «Ի թուին 22 է (1336) նոյն թագաւորն Լեւոն յղրկեց զիս՝ գեթում Ախտուցն տէր ջամբուլայս Հայոց առ Մարայ սուլտանն դեսպան: Գնացի ինչուի յԱվագնիյարիշն, եւ անտի դարձուց զիս սուլտանն Միլէֆ Նասրն, որ եկի յերկիրս. կեցայ եւ դուրս ամիս»<sup>79</sup>:

Ալ-Մակրիզին հաստատում է Հէթում Ջամբուլայի վկայութիւնը: «Թաֆֆուրն իր դեսպաններին ծովով ուղարկեց Դիմեսա»<sup>80</sup>, բայց սուլթանը թոյլ չտուեց նրանց իրեն ներկայանալ, քանի որ նրանք Ասորիքի փոխարքային չէին տեղեկացրել իրենց ներկայանա-

78 ABŪ AL-FIDĀ', *Al-Muhtasar*, §. 2, 449, ինչպէս նաեւ՝ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Հ. Թ., *Արաբական աղբիւրները*, 247-248 եւ 286-287:

79 ՄԱԹԵՆՈՍԵԱՆ, Ա. Ս., *Հէթում Ախտուց Տիրոջ եւ Վասիլ Մարաջախտի ժամանակագրութիւնները*, Պատմա-քանասիրական հանդէս, հտ. 4, 1963, 194:

80 Դամիեսոսա՝ փաղաֆ Եգիպտոսում՝ Նեղոսի դելտայում:

լու մասին: Ու վերադարձան թափփուրի մօտ», - գրում է նա: *Իրավիճակը հարթեցու նպատակով Հայոց արքան դիմում է «դիւանագիտական նուէրի»՝ այս դէպքում «կաշառքի» օգնութեանը: «[Թափփուրը] նուէր ուղարկեց [Թեմգիզին]՝ Ասորիքի փոխարքային, եւ նրան խնդրեց արգելել զօրքերին իր երկիրը [մտնել], եւ որ ինքը յանձնում է Ջահան գետից անդին ընկած բոլոր ամրոցները սուլթանին», - շարունակում է ալ-Մակրիզին<sup>81</sup>: Թանքիզը, ի հարկէ, կատարում է խոստումը՝ յորդորելով բոլորին սպասել սուլթան ալ-Նասիր Մուհամմադի պատասխանին, բայց նա չի կարողանում կիլիկիա արշաւելու մտքից հետ պահել Հայկաի ամիրա Ալտուն-Բուղային: Առաջ անցնելով նշենք, որ կիլիկեան Հայաստանը Ջահան գետից անդին ընկած բերդերի հետ մէկտեղ բանակցութիւնների արդիւնքում 1337 թուականի նոր պայմանագրով Մամլուքեան սուլթանութեանն է զիջում նաեւ Այաս նաւահանգիստը: «Նա անձար կեցաւ թագաւորն ու կատարեաց գաւառանին կամքն, ու երես, զոր կտրէր Ջահան՝ բերդերովն ու գերկիրն ու զպանծալին այս Այաս, զոր բազում ծախիւք շինեալ էր», - յիշատակագրել է դէպքերի մի ականատես<sup>82</sup>:*

Այս ծանր կորստից յետոյ Հայոց թագաւորութեան յետագայ ճակատագիրը, կարելի է ասել, վճռուած էր: Իսլամական 739 թուականի (1338/1339) տակ արաբ հեղինակներից ալ-Մակրիզին գրում է. «Այդ թուականին էմիր Թեմգիզը՝ Ասորիքի փոխարքան, քանապարհ ընկաւ Դամասկոսից՝ Սաի երկիր [մտնելու] մտայնութեամբ, որպէսզի ստուգայց կատարի այն տիրոջներում, որ իրեն էին ընծայուել: ...Թեմգիզը Հայկա անցաւ եւ մտաւ Սաի երկիր: Թափփուրն իր եղբոր միջոցով թանկարժէք նուէր տուեց նրան: Նա ընդունեց այն եւ պատուոյ հանդերձներ հագցրեց նրան: [Թեմգիզը] բնակեցրեց այդ գիւղերը մարդկանցով, անասուններով, հացահատիկ ցանք կատարեց եւ վերադարձաւ»<sup>83</sup>: Այս հաղորդումից պարզ է, որ Հայոց արքայի հեղինակութիւնն այն աստիճան էր ընկել, որ նա արդէն ստիպուած էր «պատուոյ հանդերձներ» ընդունել ոչ թէ սուլթանից, այլ վերջինիս վասալից՝ Ասորիքի փոխարքայ Թանքիզից:

81 AL-MAQRIZĪ, *Al-Sulūk*, ց. 2.2, 428.

82 Տե՛ս ՀԶԷ, ԺԴ դար, կազմեց Լ. Ս. Խաչիկեան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան 1950, 295, ինչպէս նաեւ՝ ՀԶԷ, ԺԴ դար, Մասն Ա. (1326-1350), 295-296: Հմմտ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա. Ս., *Հեթում Ախտուց Տիրոջ եւ Վասիլ Մաքախտի Ժամանակագրութիւնները*, 193:

83 AL-MAQRIZĪ, *Al-Sulūk*, ց. 2.2, 467-468: Այդ մասին տե՛ս նաեւ Անդ, 436:

Լեւոն Դ-ը մահանում է գահաժառանգ չթողնելով: Զիւան (Յովհաննէս-Ջեհանի) Լուզինեանի մօտ մէկամեայ (1342-1343) պայլութիւնից յետոյ Բիւզանդիայից Կիլիկիա է ժամանում եւ թագաւոր օժուում նրա եղբայրը՝ Գի (Գուրգոն) Լուզինեանը (1342-1344): Նրա օրոք հայ-մամլուքեան արդէն շուրջ 80ամեայ հակամարտութեան մէջ առաջին անգամ հայոց արքունիքը բացէիբաց հրաժարուում է ոչ միայն Մամլուքեան սուլթանին ընծաներ եւ պարգեւներ մատուցելուց, այլեւ առհասարակ հարկատուութիւնից: Գիի այս խիզախման մասին խօսում է Լեւոն Է.ի կենսագիրը՝ Յովհաննէս Դարդելը. «Եւ քանզի սուլթանին Բաբելոնի եւ Թուրքաց, մերաքնակաց քաղաւորութեանն Հայոց, լեալ էր սովորութիւն զի ի լինել նորոյ քաղաւորի ի Հայաստան, առաքեալ լինէին նոցա պարգեւք եւ ընծայք, իբրեւ տուրս հարկաց, պատգամաւորս արակեցին առ արքայն Գուի, պահանջելով՝ զի ըստ օրինակի նախորդացն իւրոց առաքեացէ առ նոսա գտուրս ընծայիցն: Ետ նոցա պատասխանի արքայ Գուի եւ ասէ. «Կենդանի է Տէր, զի ցորչափ կայ մեր շունչ ի մարմնի՝ ոչ տացուք պարգեւս, ոչ ընծայս եւ ոչ այլ ինչ ի հարկաց, ոչ սուլթանին եւ ոչ այլում ումեք յանաւատից, մինչեւ թողեալ իցէ նոցա զաշխարհ մեր եւ զքաղաւորութիւն ի վիճակ պայմանի, յորում գտանէր նա ի սկզբան անդ, յորժամ նախորդք մեր հատուցանէին նոցա զհարկսն»<sup>84</sup>: Դարդելի այս վկայութիւնը հաստատում է, որ ընծաների մատուցումը մամլուքեան սուլթաններին նոյնպիսի պարտաւորութիւն էր հայոց թագաւորների համար, ինչպէս որ հարկազուժարների վճարումը: Տարեկան հարկի վճարումից հրաժարուելու հանգամանքը հաստատում է նաեւ դրամագիտական փաստերով: Բանն այն է, որ հարկերի միջոցով Սուլթանութեան գանձարանում յայտնուած հայկական արծաթէղբամները՝ քաֆուրիկները, միշտ չէ, որ շրջանառութեան մէջ դրուում անմիջականօրէն: Դրանք շատ յաճախ կրկնադրոշմուում էին Եգիպտոսի սուլթանների անունով արաբերէն մակագրութիւններով: Բայց միշտ չէ, որ յաջողում էր մամլուքեան փողերանոցների կաղապարներով վերադրոշմումը խնամքով եւ անթերի կատարել: Այս մասին են վկայում յայտնաբերուած դրամները, որոնց դարձերեսին դեռ ընթեռնելի են հա-

84 ՅՈՎՀԱՆՆՈՒ ԴԱՐԴԵԼԻ Ժամանակագրութիւն Հայոց, տպարան Ի. Ն. Ալօփօլսոյովի, Ս. Պետերբուրգ 1891, 33: KÖHLER, CH., *Chronique d'Arménie par Jean Dardel, Recueil des Historiens des Croisades. Documents Arméniens*, t. 2, Paris, 1906, p. 22: Տե՛ս նաեւ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Լ., *Խաչակիրները*, հտ. 2, 418:

յերէն մակագրութիւնները<sup>85</sup>: Ձ. Պտուկեանին Գի Լուզինեանի ա-  
նունով հատուած եւ արաբերէն կրկնադրոշմներ կրող դրամներ  
յայտնի չեն եղել<sup>86</sup>: Եղիա Ներսիսեանը գտել է այդպիսի մէկ քա-  
ֆուորիւն<sup>87</sup>, որ գուցէ Գիի յաջորդ Կոստանդին Գ.ը (1344-1362)  
իր վճարած հարկի մէջ յանձնած լինի թշնամական գանձարան<sup>88</sup>:  
Սա, գուցէ, խօսուած է հայոց արքայի՝ մամլուքեան հարկապա-  
հանջութիւնը մերժելու վերաբերեալ պատմիչների յիշեալ հա-  
ղորդումների արժանահաւատութեան օգտին:

Գիի այս որոշումը, սակայն, նոր դժբախտութիւններից  
բացի ոչինչ չբերեց երկրին: Դարդելի հաղորդումը հաստատում  
են նաեւ արաբական աղբիւրները: Ալ-Մակրիզին հիջրայի 744  
թ. Ջումադա I ամսի (21.09.1343-20.10.1343) ներքոյ գրում է.  
«Այդժամ փոստահերով սուրհանդակ եկաւ Հալեպից՝ յայտնելով,  
որ Հալեպի, Համայի եւ Տրիպոլիի գորբերը՝ Ակսունկուրի եւ Սալահ  
ալ-Դիին ալ-Դաւադարիի գլխաւորութեամբ, դուրս են եկել՝ Սաի ուղ-  
ղութեամբ՝ [պատերազմելու նրա ժողովրդի դէմ], քանի որ վերջինս  
հրաժարուել էր խարաջ (գլխահարկ) [վճարելուց]: Թուրքմէնները  
նրանց հնազանդօրէն դիմաւորեցին եւ միասնաբար յարձակուելով՝  
այնքան վատ արաբներ թոյլ տուեցին հայերի նկատմամբ, մինչեւ  
որ նրանց պարտադրեցին՝ վճարել խարաջը»<sup>89</sup>: Իբն ալ-Վարդիի  
հաղորդածը շատ աւելի ինֆորմատիւ է՝ բացայայտելով յիշեալ  
անցքերի կարեւոր հանգամանքներ: Ըստ նրա՝ այս արշաւանքին  
նախորդել էին թուրքմէնական ասպատակութիւններ, որպէս պա-  
տասխան «կարամանի երկրում հայերի գործած [արաբների]»<sup>90</sup>:  
Նոյն հեղինակի վկայութեամբ՝ մուսուլմանները հասնում են  
մինչեւ Ադանա: Սակայն, կաշռուելով հայոց արքայի կողմից՝  
Հալեպի գորքի հրամանատար Ակսունկուրը հրամայում է գորքե-

85 BALOG, P., *The Coinage of the Mamluk Sultans of Egypt & Syria*, The American Numismatic Society, New York 1964, 146-147; BEDOUKIAN, P. Z., *Some Armenian coins overstruck in Arabic in Armeniaca*, Saint Lazare, Venise 1969, 138-147:

86 Անդ, 144:

87 ՆԵՐՍԷՍԷԱՆ, Է., *Կրիկեան Հայաստանի արաբերենով կրկնադրաշմուծ դրամները*, Հայկագետան հայագիտական հանդէս, Հատոր Ի., Պէյրուս 2000, 159, 166:

88 NERCESSIAN, Y. T., *An overstruck takvorin of Guy*, Armenian Numismatic Journal, Series I, vol. XXIV, № 3 (September), 1998, 33-34.

89 AL-MAQRIZI, *Al-Sulūk*, ց. 2.3, 650.

90 ՏԵ՛Ա ԱԲՒ ԱԼ-ԲԻԴԱ՛, *Al-Muhtasar*, ց. 2, ք. 501, ինչպէս նաև՝ IBN AL-WARDI, *Tatimmat al-Muhtasar fi aḥbār al-baṣār*, ց. 2, al-Qāhira 1868, 336:

րին նահանջել՝ փաստարկելով, որ սուլթանի կողմից հրաման չունի հայոց երկրի խորքերն առաջանալու<sup>91</sup>:

Թուրքմէն-մամլուքեան այս չդադարող աւարառուական ար-  
շաւանքների եւ Գիի լատինամէտ քաղաքականութեան Փօնին  
խիստ թէժանում է նաեւ երկրի ներքին դրուժիւնը՝ յանգեցնելով  
պետական յեղաշրջման, որի զոհն է դառնում նաեւ Գի արքան:

Հարկատուութիւնը մամլուքներին վերականգնում է Գի  
Լուզինեանի յաջորդի՝ Պաղտին մարաջախտի որդի Կոստանդին  
Գ-ի օրոք: Արաբական աղբիւրներում հետաքրքիր տեղեկութիւն-  
ներ կան այս շրջանում հայ-մամլուքեան ռազմական բախումնե-  
րի վերաբերեալ: Այսպիսի վերագրուման (1347 թ.) անյաղող փոր-  
ձից յետոյ երկիրը, Արեւմուտքից հական զինական օգնութիւն  
ստանալու յոյան սպառած, յայտնում է թշնամական լիակատար  
շրջափակման մէջ եւ սկսում աստիճանաբար տնտեսապէս քայքա-  
յուել: Ժամանակին Սուլթանութեան դահակալներին պարբերա-  
բար մատուցուող շքեղ նուէրների մասին թերեւս արդէն անտե-  
ղին է խօսելը, մանաւանդ որ արաբական աղբիւրներում դադա-  
րում են յիշատակութիւնները դրանց մասին: Պատճառն այն էր,  
որ հայոց թագաւորութիւնը այժմ նոյնիսկ չէր կարողանում իր  
վրայ դրուած հարկային բեռը կրել: Այլ-Մակրիզին գրում է, որ  
սուլթան ալ-Սալիհ Իսմաիլի (կառ. 1342-1345) օրոք հայոց ար-  
քունիքը դիմել է տարեկան հարկաչափը կիսելու խնդրանքով, ո-  
րը սուլթանը բաւարարել է<sup>92</sup>: Նոյն հեղինակը իսլամական 749ին  
Ջու ալ-Հիջլայ (1349 Փետրուար-Մարտ)<sup>93</sup> եւ 751ի Ռաջաբ  
(1351 Սեպտեմբեր-Հոկտեմբեր)<sup>94</sup> ամիսների ներքոյ խօսում է  
Կահիրէ ժամանած հայկական դեսպանութիւնների մասին, որոնք  
հարկը կիսով չափ էին բերել՝ մի դէպքում երկրին պատուհա-  
սած համաճարակի, մէկ այլ դէպքում՝ երկրի քարուքանդ վիճա-  
կում լինելու պատճառաբանութեամբ, ինչի համար հայցում էին  
մամլուքեան իշխանութիւնների ներողամտութիւնը: Իբն Կադի -  
Շուհբան գրում է, որ հիջրայի 750 թուականի Սաֆար ամսին  
(1349 Ապրիլ-Մայիս) սուլթանի հրամանով Դամասկոսից ճանա-  
պարհուել է 3000նոց հեծելազօր «Սսի երկիր՝ հայերից սպանելու ի-

91 ABŪ AL-FIDĀ', *Al-Muḥtaṣar*, ց. 2, 503; IBN AL-WARDĪ, *Tatimmat al-Muḥtaṣar*, ց. 2, 338.  
92 AL-MAQRĪZĪ, *Al-Sulūk*, ց. 2.3, 694.  
93 Անդ, 771:  
94 Տե՛ս Անդ, 821:

րենց վրայ դրուած տարեկան հարկը վճարելուց հրաժարուելու պատճառով»: *Ըստ պատմիչի՝ հայոց արքան, իմանալով պատրաստուող արշաւանքի մասին, շտապել է ուղարկել հարկը, իսկ սուլթանը հետ է կանչել ասորիքեան զօրախումբը*<sup>95</sup>:

*Կիլիկիայում հայոց պետականութեան կեանքը փոքրիշատէ երկարում էր միայն Մամլուքեան սուլթանութիւնում ալ-Նասիր Մուհամմադի յետնորդների օրոք սկսուած ներքաղաքական խառնակ ժամանակաշրջանի շնորհիւ, որն արդի պատմաբան Ռ. Իրուլինը «փոթորկալից շրջան» է անուանում*<sup>96</sup>:

*Արշաւանքները վերսկսում են 1357 թուականից: 1360ական թուականների սկզբին արդէն ականյայտ էր, որ մամլուքների եւ թուրքմէնների անդուլ հարուածների ներքոյ տնտեսապէս հիւծուած երկիրն այլեւս ի զօրու չէր երկար գոյատեւել: 1360ին Կոստանդինն ստիպուած է լինում ծանր պայմաններով հաշտութիւն կնքել Կահիրէի հետ՝ յանձնելով Դաշտային Կիլիկիան եւ վերականգնելով հարկատուութիւնը: Հիջրայի 765ին Շաւուալ ամսի (1364 Յուլիս) ներքոյ ալ-Մակրիզին գրել է. «Եկան Սսի իշխողի դեսպանները՝ իրենց վրայ դրուած հարկի թեթեւացում խնդրելու: Նրանց Կահիրէում եղած ժամանակ մահացաւ նրանց արքան, ուստի վերադարձան առանց որեւէ արդիւնքի»<sup>97</sup>:*

*Ինչ վերաբերում է ընծաների մատուցմանը, ապա դրանց մասին յստակ վկայութիւններ ժամանակի մամլուքեան սկզբնաղբիւրներում մինչեւ 1375 թուականի իրադարձութիւններն այլեւս չենք գտնում:*

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

95 TĀRĪḤ IBN QĀDĪ ŠUHBA, ց. 2, bi-tahqīq 'Adnān Darwīš, *al-Ma'had al-faransī li-l-dirāsāt al-'arabiyya*, Dimašq 1994, 662.

96 IRWIN, *The Middle East in the Middle Ages: The Early Mamluk sultanate 1250-1382*, Southern Illinois University Press, Carbondale and Edwardsville, 1986, 125.

97 AL-MAQRĪZĪ, *Al-Sulūk*, ց. 3.1, 92.

## Summary

# DIPLOMATIC GIFT EXCHANGES IN THE ARMENIAN-MAMLUK RELATIONS

GRIGOR DANIELYAN

The Armenian-Mamluk conflict, that lasted almost 115 years, was accompanied not only by invasions and military operations, but also by active diplomatic communications and official correspondence, bilateral diplomatic missions, political mediations, and intricate negotiations on ceasefire and peace, on exchange of prisoners of war and transit trade. It is no wonder that there are so many mentions of Armenian diplomatic missions and envoys visiting the Mamluk court in Arabic historical sources of the 13th-16th centuries: in one case, there is a reference to the readiness of the Armenian king to mediate between the Mongol ilkhān and the Mamluk sultan. There are also notes about negotiations over the latter's territorial claims, the release of Armenian nobles kept in captivity, and many other issues.

The central focus of this study is on the information preserved in medieval primary sources about the exchange of diplomatic gifts and presents in political relations between the ruling authorities of the Mamluk Sultanate of Egypt and Syria and Cilician Armenia. It is noteworthy that, as in the case of diplomatic correspondence, the historical evidence contained in Armenian sources on gifts sent by Armenian sovereigns to Mamluk sultans is very scarce. Therefore, the main source of information on the gift exchanges between rulers of the two states are the Mamluk sources. The reports of Muslim chroniclers on diplomatic gifts sometimes contain interesting facts about originality of the Armenian medieval material culture. The most valuable testimonies preserved in Arabic primary sources regarding the Mamluk protocol of gift-giving and the use of gifts in key episodes of the Armenian-Mamluk relations are presented. The reports of the Armenian and Mamluk authors are discussed in chronological order and are provided with appropriate historical commentary.